ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

«ՖԻՆԱՆՍՆԵՐ,ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐԿ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ - 2025

Բովանդակություն

Նախաբան..... 3

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը..... 5

Ծրագրի նկարագիրը..... 6

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....15

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ..... 40

Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 40

Մասնագիտացված պատրաստման դասընթացներ.....46

Պարտադիր դասընթացներ 46

Կամընտրական դասընթացներ..... 84

Կրթական այլ մոդուլներ.....87

Դասընթացների քարտեզագրում 92

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սիրելի՛ ուսանողներ,

դուք սովորում եք բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, ինչը ենթադրում է նոր պահանջներ, առավել պատասխանատու և լուրջ մոտեցում, հետևողական ու նպատակային աշխատանք, ուսումնական և գիտահետազոտական գործընթացների զուգակցում, կրթական, հետազոտական տարբեր ծրագրերից օգտվելու հնարավորություններ:

Դուք պետք է խորացնեք ձեր տեսական և պրակտիկ գիտելիքները, շարունակաբար ընդլայնեք աշխարհայացքային և մասնագիտական իմացության սահմանները, ձեռք բերեք նոր հմտություններ:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագիրն առավել գիտատար է և ներառում է պարտադիր ու կամընտրական դասընթացներ, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ, մագիստրոսական թեզի կատարում և ամփոփիչ ատեստավորում: Հենքային դասընթացները և սովորողի ընտրությամբ՝ կամընտրական մոդուլները տեղ են գտնում մագիստրոսի անհատական պլանում և ուսումնասիրվում նրա կողմից: Հիմնական մասնագիտական և միջգիտակարգային՝ լրացական դասընթացները մագիստրատուրայի ուսանողին նախապատրաստում են ոչ միայն արդյունավետ մասնագիտական գործունեության, այլև շարունակական կրթության և գիտահետազոտական աշխատանքի համար: Մագիստրատուրայում բազմազան են դառնում ուսումնասիրվող առարկաները, ուսուցման և հետազոտական աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում գործում է կրեդիտային համակարգը, սովորողների գիտելիքների ստուգման և բազմագործոն գնահատման կարգը: Կարևորվում են մագիստրոսի և գիտական ղեկավարի համագործակցությունը, մագիստրոսական թեզի թեմայի ճիշտ ընտրությունը, թեզի պատրաստումն ու պատշաճ պաշտպանությունը:

Մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսում է ինքնուրույն հետազոտական աշխատանքի մեծ ծավալ, մասնագիտության արդի հիմնահարցերի առավել խոր ուսումնասիրություն՝ հաշվի առնելով գիտության, կրթության, մշակույթի, սոցիալական համակարգի, տեխնիկայի, նորագույն տեխնոլոգիաների, արհեստական բանականության զարգացման միտումները և, իհարկե, կրթության որակի ապահովման հրամայականը:

Ուստի, դուք պետք է դրսևորեք շահագրգիռ ու ստեղծագործական մոտեցում, ներգրավվեք նոր գիտական հայեցակարգերի ուսումնասիրության ոլորտ և ձեռք բերեք ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի փորձ:

Դուք պետք է նպատակային օգտագործեք մագիստրատուրայում ուսանելու տարիները և դառնաք որակյալ մասնագետներ:

Մաղթում ենք ձեզ հաջողություն, որի գրավականը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Դասընթացների նկարագիրը նախատեսված է «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ սովորող մագիստրոսի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

ՖԻՆԱՆՍՆԵՐ,ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐԿ

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նկարագիր

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /041201.01.7/
2. Բուհը	Գավառի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	տնտեսագիտության մագիստրոս
5. Կրթական աստիճանը	մագիստրատուրա
6. Ուսումնառության լեզուն	հայերեն
7. Ուսուցման ձևը	առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան,
- նախորդ կրթական աստիճանում ցուցաբերած բարձր առաջադիմություն,
- ընդհանուր տնտեսագիտական գիտելիքներ
- օտար լեզուների իմացություն
- համակարգչային ծրագրերի իմացություն:

Ընդունելությունը կատարվում է մրցույթային կարգով «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության ընդհանուր մասնագիտական ծրագրով ընդունելության համալիր քննության հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.
Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

Տնտեսագիտության (Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ) մագիստրոսի *որակավորման աստիճան ստանալու համար սովորողը հաջողությամբ պետք է լրացնի 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն՝ ներառյալ 12 կրեդիտ ծավալով մագիստրոսական թեզը և 62 կրեդիտ ծավալով մասնագիտական դասընթացների կրթամասը: Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.*

(Գիտելիք) *ունի տնտեսագիտության վերաբերյալ խոր և համակարգված գիտելիքներ, կարող է օգտագործել ոլորտի հիմնարար հետազոտությունները, տնտեսական երևույթների և դրանց օրինաչափությունների ուսումնասիրման հիմնական սկզբունքները, տեսությունները, ինչպես նաև*

ունի ֆինանսական համակարգի վերաբերյալ կիրառական գիտելիքներ, տնտեսագիտությանը հարակից մասնագիտությունների որոշակի իմացություն,

(Կարողություն) *տիրապետում է տնտեսագիտությանը բնորոշ հետազոտության մեթոդներին, ունի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի կատարման, հետազոտության արդյունքների մշակման և գիտական մամուլում հրապարակման, տվյալների բազաների, ծրագրային փաթեթների օգտագործման, արդի պահանջները բավարարող գիտական ակնարկների, ռեֆերատների, ելույթների, հոդվածների պատրաստման փորձառություն, և՛ տեսական, և՛ կիրառական ոլորտներում ինքնուրույն աշխատելու կարողություններ,*

(Հմտություն) *ունի տնտեսագիտության տարբեր ոլորտներում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ, տիրապետում է բավարար գիտելիքների և հմտությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում տնտեսագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:*

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

«Ֆինանսներ,դրամաշրջանառություն և վարկ» *մասնագիտության մագիստրատուրայի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել ֆինանսների ոլորտում հիմնարար պատրաստվածություն և վերլուծական մտածողություն ունեցող տնտեսագետներ, որոնց գործունեությունն ուղղված կլինի ֆինանսների բնագավառում վերլուծությունների և զարգացմանը նպաստող հետազոտությունների կատարմանը:*

Ելնելով բուհի առաքելությունից՝ Կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները՝

Կրթություն

1. *Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու ֆինանսիստ-տնտեսագետի պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն:*
2. *Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ֆինանսների ոլորտում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար:*
3. *Ձևավորել ֆինանսիստ-տնտեսագետին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:*
4. *Նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և նրա՝ որպես վերլուծական մտածողություն ունեցող հասարակության անդամի ձևավորմանը:*
5. *Զարգացնել ուսանողների մոտ սովորելու, նորն ընդունելու և անընդհատ կատարելագործվելու հմտություններ:*

Հանրային ծառայություն

1. *Նպաստել ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ ներգրավելով նրանց արտաքին շահակիցներին մատուցվող մասնագիտական ծառայությունների տրամադրման գործընթացին:*

11. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը
Մասնագիտական գիտելիք և իմացություն
Ա 1. Տնտեսագիտության վերաբերյալ խորը և համակարգված գիտելիքներ. Տնտեսագիտության տեսության և պրակտիկայի հիմնադրույթների, միկրո, մակրո մակարդակներում գիտահետազոտական հիմքերի, տնտեսագիտությանը հարակից մասնագիտությունների որոշակի իմացություն, ինչպես նաև մասնագիտական արդի հիմնախնդիրների իմացություն:
Ա2. Տնտեսափիլիսոփայական հիմնական հայեցակարգերի տիրապետում. տնտեսագիտության ժամանակակից տեսությունների, հասարակական կյանքում փիլիսոփայության սոցիալական դերի, փիլիսոփայական մտքի զարգացման, ժամանակակից փիլիսոփայական և տնտեսագիտական ուղղությունների միջև կապի բացահայտում:
Ա3. Կիրառական գիտելիքներ ֆինասավարկային հարաբերությունների, բիզնես նախագծերի, ինչպես նաև կորպորատիվ ֆինանսական և տեղեկատվական համակարգերի կառավարման գործընթացի վերաբերյալ:
Ա4. Հիմնարար մասնագիտական գիտելիքներ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, կառավարման, ՀՀ ձեռնարկատիրական համակարգի ձևավորման և կարգավորման առանձնահատկությունների, ժամանակակից բիզնեսի իրավական կարգավորման հիմնախնդիրների, կազմակերպությունների ֆինանսական դրության վերլուծության, ֆինանսական առողջացման մեխանիզմների քաղաքականության մշակման, կանաչ բիզնես մոդելների հիմնական տեսակների, կայուն զարգացման ցուցանիշների, կանաչ ձեռնարկությունների իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ հիմքերի, կանաչ բիզնեսի ֆինանսավորման և աջակցության հիմնական աղբյուրների վերաբերյալ:
Ա5. Երկրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների էության և սկզբունքների, պետության տնտեսական գործունեության հիմնական բնագավառների և գործառույթների, պետության վարքագծի հիմնական սկզբունքների, տնտեսական քաղաքականության ուղղությունների, ծրագրային բյուջետավորման, ՀՀ տնտեսության մրցունակության և արտաքին տնտեսական հիմնախնդիրների, հարկային քաղաքականության իրականացման ձևերի ու սկզբունքների, միկրո և մակրոմակարդակում տնտեսական լուծումների վերաբերյալ կառավարչական որոշումների կայացման մեխանիզմների իմացություն:
Ա6. Գիտական հետազոտությունների ընդհանուր և սոցիալ-իրավական մեթոդաբանության և գիտահետազոտական աշխատանքների իրականացման /գիտության փիլիսոփայության հիմունքների, գիտական հետազոտությունների մեթոդաբանության հիմնական դրույթների, գիտական հետազոտությունների պլանավորման և տեղեկատվության համակարգման հիմնական մեթոդների և միջոցների/ վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:
Կրթական ծրագրի գործնական մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը
Բ 1. Մասնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

Բ2. Քննադատական և վերլուծական մտածողություն, թիմում աշխատելու, արդյունավետ բանավիճելու, կողմնորոշվելու, ժամանակակից ֆինանսատնտեսական քննարկումներում գիտականորեն արտահայտվելու, կոնֆլիկտային իրավիճակները վերլուծելու, լուծումներ առաջարկելու կարողություն: Միջանձնային արդյունավետ հարաբերությունների, բարոյական և էթիկական արժեքների պահպանման և օբյեկտիվ որոշումների կայացման հմտություններ դրսևորելու կարողություն:
Բ3.Մասնագիտական թեմաների շուրջ գիտական ռեֆերատների, ակնարկների, հոդվածների, զեկուցումների պատրաստման կարողություններ: Կառավարման ոլորտում ուսումնասիրությունների, գիտական հետազոտությունների արդյունքները տարբեր բնագավառներում օգտագործելու, փաստացիի հետ համադրելու և արդյունավետ եզրահանգումներ կատարելու, հիմնավորված առաջարկություններով հանդես գալու կարողություն:
Բ 4. Գիտահետազոտական հիմնահարցերի շուրջ ինքնուրույն ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական հիմնախնդիրները ինքնուրույն վեր հանելու, պրակտիկ խնդիրների լուծման վերաբերյալ զեկույցներ և կանոնակարգեր պատրաստելու և գիտամանկավարժական գործունեություն ծավալելու կարողություն:
Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը
Գ1. Մասնագիտության ոլորտում տնտեսագիտորեն հիմնավորված գրավոր և բանավոր հաղորդակցման կարողություն հայերեն և օտար լեզուներով, ֆինասատնտեսական եզրույթների օգտագործում՝ մտքերը տրամաբանորեն արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ կատարելու, դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու և ֆինանսատնտեսական խնդիրների լուծման գործընթացում կիրառելու կարողություն:
Գ2. Համակարգչային հմտություններ և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում. նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, մասնագիտական գործունեության բնագավառում հետազոտվող գործընթացների և երևույթների գնահատման մաթեմատիկական մոդելների և մեթոդների, համակարգչային տեխնոլոգիաների մշակման, ներդրման, հետազոտության թեմային առնչվող գիտական տեղեկույթի հավաքագրման, համակարգման, վերլուծության և ընդհանրացման կարողություն:
Գ3. Թիմում աշխատելու, աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվություն ունենալու, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և տարբեր բնագավառների ներկայացուցիչների հետ արդյունավետ բանակցություն վարելու, կրթությանը վերաբերող գիտությունների հայեցակարգերին և տեսություններին քննադատական և վերլուծական մոտեցում ցուցաբերելու կարողություններ՝ անհրաժեշտության դեպքում նպաստելով թիմի այլ անդամների գործառույթների իրականացմանը:
Գ 4. Ժամանակի կառավարման և առաջադրանքը ժամանակին պատշաճ կատարման կարողություն
Գ5. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու, աշխատանքն ինքնուրույն պլանավորելու կազմակերպական կարողություն, ինչպես նաև մասնագիտական գործունեությունը բարելավելու և հարափոփոխ ու պահանջկոտ աշխատանքային միջավայրին ինտեգրվելու կարողություն:
12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ Գավառի պետական համալսարանում իրականացվող «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման ընթացքում կիրառվում են տարբեր ինտերակտիվ մեթոդներ, որոնք ուսանողներին առավելագույնս ներգրավում են ուսուցման գործընթացի մեջ՝ զարգացնելով

ուսանողի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, հաղորդակցման հմտությունները: Դասախոսներն առաջնորդվում են հետևյալ մեթոդներով՝

Բովանդակային ուսուցում/դասախոսություն/՝ ուսանողներին ներկայացվում են հիմնարար գիտելիքներ տեսական-պատմական, ճյուղային տնտեսագիտության և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսությունների, դրանց սկզբունքների վերաբերյալ:

Իլյուստրատիվ մեթոդ՝ կատարվում են տարբեր մոդելների, մեխանիզմների, գծագրերի, շնորհանդեսների և թեմային առնչվող հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Համագործակցային ուսուցում՝ խթանում է ուսանողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին՝ զարգացնելով ուսանողի՝ թիմում աշխատելու և աշխատանքը ներկայացնելու ունակությունները, ղեկավարման հմտությունները, քննադատական և վերլուծական մտածողությունը:

Հարցադրում՝ ուսանողներին հնարավորություն է տալիս ներկայացնել սեփական եզրակացությունները և անհրաժեշտության դեպքում արդյունավետ բանավիճել:

Իրավիճակի ուսումնասիրման մեթոդ՝ խմբին ներկայացվում է աշխատանքային որևէ իրավիճակի նկարագրություն: Ուսանողներին առաջարկվում է քննարկել, վերլուծել իրավիճակը և հանդես գալ առաջարկությամբ՝ այդպիսով ուսանողի մոտ զարգացնելով խնդիրների լուծման և օբյեկտիվ որոշումների կայացման կարողություններ:

Քննարկումներ՝ համապատասխան ոլորտի առաջատար մասնագետների հետ՝ հրավիրելով վերջիններիս դասախոսությունների՝ շաղկապելու տեսական գիտելիքները գործնական կիրառման հետ:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանք /հետազոտական մեթոդ/՝ հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մագիստրոսի մոտ մասնագիտական ոլորտում հետազոտական, վերլուծական, ստեղծագործական ունակությունների ձեւավորումն ու զարգացումը: Այն օգնում է ուսանողներին իրականացնել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ, խթանել ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը, ապահովել կայուն կապ դասախոսների հետ (առցանց էլեկտրոնային հետազոտություններ), որոնք օգնում են ուսանողին ձեռք բերելու ինքնուրույն գործունեության իրականացման կարողություն:

13. **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա6 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.

- առաջադրանքներ,
- քննություններ,
- անհատական ուսումնական հանձնարարություններ և քննություններ,
- բանավոր հարցում,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ4 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- քննություններ,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն,
- առաջադրանքներ,
- զեկույցների պատրաստում,

- գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկա:

Ընդհանրական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- քննություններ,
- զեկուցումներ,
- ռեֆերատներ,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Մագիստրոսական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- տեսալսողական կաբինետ,
- ուսումնական լսարաններ՝ ահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական կաբինետներ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

‹‹Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավաժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող առարկային համապատասխանող մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և իրականացնում են գիտական կամ գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային մարմինների, ՀՀ ֆինանսական համակարգի, տնտեսության իրական հատվածի ձեռնարկատիրական միավորների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնագիտական կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների համակազմից:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

Մասնագետի բնութագիր.

Անձնային որակներ.

1. Տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ

պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժի օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Մանկավարժական որակներ.

1. Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերի, մակրոտնտեսական և միկրոտնտեսական ցուցանիշների իմացություն և դրանց ներկայացման, մեկնաբանման, վերլուծության կարողություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացում, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, դասընթացի ծրագրի կազմման և մշակման կարողություն:

Կազմակերպչական բնութագիր.

1. Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցության մոդելավորման կարողություն***,***

2. Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,

3. Անհրաժեշտ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,

4. Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման կարողություն:

Հաղորդակցական հմտություններ.

1. Խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն,

2. Մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

Համակարգչային ծրագրերի իմացություն

1. Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում դրանք կիրառելու հմտություն:

Դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները.

1. **իմանա** դասավանդած առարկան, համապատասխան գիտակարգը, ՀՀ ֆինանսական, բյուջետային, հարկային, բանկային համակարգերի և այլ ֆինանսատնտեսական ինստիտուտների կառուցվածքները, ձևավորման սկզբունքները, տնտեսական երևույթների և դրանց օրինաչափությունների ուսումնասիրման հիմնական սկզբունքները, տեսությունները, մասնագիտացման ոլորտի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները,

2. **կարողանա** իրականացնել ձեռնարկության ֆինանսական կառավարում, լուծել ֆինանսական խնդիրներ, կատարել ֆինանսական պլանավորում, վերլուծել ՀՀ մակրոտնտեսական վիճակը, գիտելիքներ հաղորդել դասավանդման արդի մեթոդներով, կազմակերպել և համակարգել մասնագիտական ուսուցման գործընթացի բոլոր փուլերը, վերլուծել ուսուցման գործընթացի արդյունքները, զարգացնել մասնագիտական և մանկավարժական հմտությունները,

3. **տիրապետի** մասնագիտական ու մանկավարժական գիտելիքները խորացնելու հմտություններին, մասնագիտական ուսումնասիրման առարկա հանդիսացող տարբեր տնտեսական երևույթների, դրանց

փոփոխման օրինաչափությունների, ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության, գործնականում դրանց կիրառման հմտություններին, հետազոտության, ուսուցման և գնահատման մեթոդներին, տվյալ ուսուցման ձևի կազմակերպման համար անհրաժեշտ իրազեկություններին (կոմպետենցիաներին):

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսագիտության մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Տնտեսագիտության մագիստրոսը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- Տնտեսության իրական հատվածի ձեռնարկատիրական միավորներ,
- Տնտեսության ֆինանսական հատված /բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ/,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ,
- նախարարությունների ֆինանսական ծառայություններ,
- կառավարությանը ենթակա մարմիններ,
- նախարարությանը ենթակա մարմիններ /սոցիալական ոլորտի գործունեություն՝ դպրոցներ, մշակութային հաստատություններ/:
- բուհերի համապատասխան ամբիոններում՝ որպես դասախոս,
- գիտահետազոտական հաստատություններում՝ որպես գիտաշխատող:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում Ֆինանսներ մասնագիտության նկատմամբ եղած պահանջարկը, հանրապետական և մարզային տարբեր հաստատություններում աշխատատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ պետական կառավարման համակարգում աշխատելու փորձը, գործատուներից ստացված դրական կարծիքները, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում տնտեսագետ ուսանողների սովորելու հնարավորությունը, բակալավրի որակավորմամբ տնտեսագետների՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, բուհի Կառավարման և ֆինանսների ամբիոնի կադրային համալրվածությունը, տնտեսական ոլորտի պրակտիկ մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› մասնագիտական կրթական ծրագրով սովորողների համար պրակտիկայի բազայի առկայությունը՝ ի դեմս մի շարք հաստատությունների, ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› մասնագիտության շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, տնտեսագետ մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի

վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը, ՀՀ Սահմանադրության, օրենքների փոփոխություններին համապատասխան կրթական ծրագրի բովանդակության վերանայումն ու արդիականացումը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ «Learn.gsu.am›› համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ «E-Library.gsu›› առկայությունը:

Ծրագրի կայունությանը սպառնում են ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, Տնտեսագիտություն բաժնի ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:

Մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի դասընթացները, ամառային և ձմեռային դպրոցները, ՏՀՏ-ների ընձեռած հնարավորությունների օգտագործումը, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ›› մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով բենչմարքինգի գործիքների կիրառումը:

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, մագիստրոսական թեզի պատրաստմանը, պաշտպանությանը և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով

արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը, մագիստրոսական թեզի պատրաստումն ու պաշտպանությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսի կրթական ծրագրի աշխատածավալը

2.1. ԳՊՀ-ում մագիստրոսի կրթական աստիճանում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2.2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

2.3. Ուսումնական տարվա տևողությունը 20 շաբաթ է, որից 14-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և

գարնանային: Ըստ այդմ՝ կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 14 շաբաթ:

2.4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

2.5. Մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

2.6. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 կրեդիտ է:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

3.1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

3.2. Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

3.3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

4. Ուսումնական ծրագիրը

4.1. Մագիստրոսի ուսումնական ծրագիրը ներառում է երկու հիմնական կրթամաս՝ ուսումնական և հետազոտական, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1.1

Կրթամասերի բաշխումն ըստ կրեդիտների

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	Ընդամենը
Ուսումնական	27	24	15	6	72
Հետազոտական	3	6	15	24	48

Աղյուսակ 1.2

Կրթամասերի բաշխումն՝ ըստ կրեդիտների

Կրթամաս	**Կրեդիտներ**	**Դասընթաց-մոդուլների քանակը**
Ընդհանուր մասնագիտական	***6***	***3***
Մասնագիտացված պատրաստման դասընթացներ	***66***	
պարտադիր	*63*	*21*
կամընտրական	*3*	*2*
Կրթական այլ մոդուլներ	***48***	***4***
Ընդամենը	**120**	**30**

Մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտայնությամբ հետևյալ դասընթացները (աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Մոդուլ- դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային ժամ (դ/գ/լ)**	**Կիսամյակ**	**Գնահատման ձևը**
Օտար լեզու մասնագիտական հաղորդակցման ոլորտում (անգլերեն)	2	**28 (0/28/0)**	1	Քննություն
Գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն	2	**28 (20/8/0)**	2	Ստուգարք
Տեղեկատվական տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը մասնագիտական հետազոտություններում	2	**42 (28/14/0)**	2	Քննություն
Բիզնեսի իրավական կարգավորման հիմնախնդիրները	3	**28 (24/4/0)**	4	Քննություն
Էկոնոմետրիկա	2	**30 (20/10/0)**	3	Քննություն
Տնտեսագիտության փիլիսոփայություն	3	**28 (24/4/0)**	4	Ստուգարք
Նախագծի կառավարում	3	**42 (28/14/0)**	1	Քննություն
Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ	3	**28 (20/8/0)**	1	Ստուգարք
Հաշվապահական հաշվառման արդի հիմնախնդիրները ֆինանսական կազմակերպություններում	4	**28 (24/4/0)**	1	Քննություն
Տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրները	3	**28 (24/4/0)**	1	Քննություն
Տնտեսական սոցիոլոգիա	2	**30 (20/10/0)**	3	Ստուգարք
Գործարար հաղորդակցում	3	**42 (28/14/0)**	2	Ստուգարք
Ֆինանսական վերլուծություն	4	**42 (24/18/0)**	1	Քննություն
Կորպորատիվ ֆինանսական կառավարում	4	**42 (28/14/0)**	2	Քննություն

Ֆինանսավարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում	4	**42 (34/8/0)**	1	Քննություն
Բանկային մենեջմենթ	3	**42 (28/14/0)**	2	Քննություն
ՀՀ հարկային քաղաքականության հիմնախնդիրներ	3	**28 (24/4/0)**	2	Ստուգարք
Ծրագրային բյուջետավորում	3	**40 (30/10/0)**	3	Քննություն
Բանկային աուդիտ	2	**20 (14/6/0)**	3	Քննություն
Դրամավարկային քաղաքականության հիմունքներ	2	**28 (20/8/0)**	2	Քննություն
Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր	3	**42 (28/14/0)**	2	Ստուգարք
Կանաչ տնտեսության հիմունքների ներածություն	3	**42 (28/14/0)**	1	Ստուգարք
Կանաչ ձեռնարկությունների տեսակների ներածություն՝ միկրոձեռնարկություն, փոքր բիզնես, սոցիալական ձեռնարկություն	3	**42 (28/14/0)**	2	Ստուգարք
Կանաչ բիզնեսի պլանավորման և ներկայացման զարգացում	3	**40 (28/12/0)**	3	Քննություն

Մագիստրոսական ծրագրի կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը. (աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Մոդուլ- դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ծառայությունների բիզնեսի զարգացման արդի հիմնախնդիրները	3	**42 (34/8/0)**	3	Ստուգարք
Ֆինանսական առողջացման մեխանիզմները կազմակերպություններում				

Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ 4

Մոդուլ- դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Գիտահետազոտական աշխատանք	24		1,2,3,4	Ստուգարք
Գիտահետազոտական պրակտիկա	6		3	Ստուգարք
Գիտամանկավարժական պրակտիկա	6		4	Ստուգարք
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12		4	Քննություն

4.2. Ըստ մասնագիտությունների՝ կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում: Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20 շաբաթյա տևողությունը, որից 14-ը հատկացվում է տեսական ուսուցմանը, իսկ 6-ը՝ քննաշրջանի համար:

5. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրսղեկների) ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության ուսումնական ծրագրին քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

Մագիստրոսների գիտելիքների գնահատման համար կիրառվում է համալսարանում գործող 100 միավորանոց սանդղակը՝ համապատասխան ECTS համակարգում գործածվող տառային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի աստիճանական կուտակման սկզբունքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ Աղյուսակ 3

Գնահատականը	**Նշանակումը**	**Թվանշանը**	**Միավորը**
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86

Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

6.1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6.2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

Տեսական դասընթացների համար

Աղյուսակ 4.

Գնահատվող աշխատաձևերը	Ընդհանուր գնահատականի կառուցվածքը
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Գիտելիքների ընթացիկ բանավոր կամ գրավոր ստուգում	50 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում	40 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Գործնական դասընթացների համար

Աղյուսակ 5.

Դասընթացի աշխատաձևերը	**Գնահատման կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Ընթացիկ ստուգումներ	40 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	50 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Ծանոթություն. Գիտական սեմինարները, պրակտիկաները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքները ենթակա են գնահատման ստուգված/չստուգված ձևաչափով, որը չի ենթադրում

գործոնային հաշվարկ: Ստուգումը կատարվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կամ ամբիոնի վարիչի կողմից:

6.3.Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 40 միավորը կամ գնահատման սանդղակի 40%-ը: Եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը պակաս է 40 միավորից, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում: Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում: Մագիստրոսը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Մագիստրոսական թեզի գնահատման գործոններ

Աղյուսակ 6

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+/1,7 – 4,0

Աղյուսակ 7

h/h	Գործոններ	Միավոր
1	Թեզի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Թեզի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները և արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Թեզի ներկայացումը, պաշտպանությունը	30

Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

7. Ընթացիկ ստուգում

7.1. Ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները, հոդվածը, զեկուցումը, թեստերի լուծումը և այլն:

7.2. Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու,

պարապմունքների ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

7.3. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումները իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

7.4. Անկախ ընթացիկ ստուգման տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ ստուգում և գնահատում:

7.5. Ընթացիկ ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ նրա համամասնությունից:

7.6. Ընթացիկ ստուգման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը:

7.7. Եթե ուսումնական պլանի համաձայն որևէ դասընթացից գործնական կամ սեմինար պարապմունք նախատեսված չէ, ապա ընթացիկ ստուգումն անցկացվում է դասախոսի կողմից տվյալ դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված պարտադիր գրավոր աշխատանքների (ստուգողական աշխատանք, թեստեր և այլն) կամ բանավոր հարցման միջոցով:

7.8. Ընթացիկ ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի:

Օրինակ 1.

Հ/հ	**Ընթացիկ** և **ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը**	**Ընթացիկ** և **ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման գնահատա կանի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը**	**Ընթացիկ** և **ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե ռում/**	**Ընթացիկ** և **ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատական ը /5այունակի միավորը.= 3այ.*4այ./**
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2

6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը **/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/**				**25,2=26**

1) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/h	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5այունակի միավորը.= 3այ.*4այ./
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			

4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը **/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/**				**12,8=13**

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

8 Հանրագումարային ստուգում

8.1. Հանրագումարային ստուգման ձևերն են քննությունները և հանրագումարային ստուգարքները (այն մոդուլներից, որոնցից քննություն չի անցկացվում):

8.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

8.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 40 միավորի շրջանակում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

8.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

8.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

8.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

Դասընթացի ընդհանուր ժամաքանակ

8.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

8.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերաբերյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

8.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

9. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

9.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

9.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

9.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

9.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

9.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

ՈԿ = Կրեդիտ

9.6 Վարկանիշային միավորը ¥ՎՄ¤ յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ = Կրեդիտ Գարդ.

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

9.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

9.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

10. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Լուծարք

10.1 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

10.2 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ից և պակաս՝ 40–ից:

10.3 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

10.4 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել մեկ անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

10.5. Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝ այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը պակաս է 25-ից, այդ առարկայից ստացել է «D» կամ «U»

գնահատական, որի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

10.6 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

11. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

11.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

11.2 Գնահատման տեսանկյունից չեն առանձնացվում հարգելի և ոչ հարգելի պատճառներով բացակայության դեպքերը:

11.3 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված՝ սահմանված կարգի բժշկական տեղեկանքի և դիմումի առկայության դեպքում:

11.4 Հարգելի պատճառով ընթացիկ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ ստուգումն ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի/պարապող դասախոսի հետ:

11.5 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

11.6 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

11.7 Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 1,7 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում:

11.8 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

11.9 Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

12. Մագիստրոսական ծրագրի հետազոտական հատվածի կազմակերպման ընթացակարգ

12.1. Հետազոտական մոդուլների ժամանակացույցը

Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրանտներին է ներկայացնում տվյալ կիսամյակի հետազոտական օրացույցը (ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը): Այն, ըստ կիսամյակի բովանդակության, ներառում է գիտական սեմինարների և պրակտիկաների կատարման ժամանակացույցերը:

12.2. Ատեստավորման կարգը

Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսված կրթական մոդուլների հաշվետվության համար կիրառվում է ստուգված/չստուգված նշումով ատեստավորման եղանակ: Գիտական սեմինարների և պրակտիկաների, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների ատեստավորումը կատարում է ծրագրի ղեկավարը, մագիստրանտի գիտական ղեկավարը կամ համապատասխան որակավորման ունեցող այլ անձ: Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած մագիստրանտիներին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը երկրորդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսվող աշխատանքը: Երկրորդ և երրորդ կիսամյակներում որևէ մոդուլով չատեստավորված մագիստրանտիները հեռացվում են համալսարանից: Մագիստրանտը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

13. Ծրագրի Ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

13.1. Ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը

Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա/ թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի քննարկմանը: Թեզի հետ միասին ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է մագիստրանտի աշխատանքի հիմնավորված գնահատական,

բ/. մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից ընդդիմախոսի՝ արտաքին գրախոսողի նշանակում,

գ/. մագիստրոսական թեզի նախնական քննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի կողմից՝ մագիստրանտի մասնակցությամբ:

դ/. Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից երաշխավորում է պաշտպանության: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:

ե/. մագիստրոսական թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

13.2. Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով /գնահատականը գոյանում է գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների գնահատումների հիման վրա/:

13.3. Ծրագրի ավարտական պահանջները

Որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է ծրագրի կատարման ընթացքում լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որից 72 կրեդիտ՝ ուսումնական հատվածից /այդ

թվում՝ 60 կրեդիտ պարտադիր դասընթացներից, իսկ 12 կրեդիտ՝ կամընտրական դասընթացներից/ և 48 կրեդիտ՝ հետազոտական հատվածից:

Մինչև ամփոփիչ ատեստավորումը (մագիստրոսական թեզի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը մագիստրանտի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

Մագիստրոսներին համապատասխան որակավորմամբ դիպլոմները (սովորական, գերազանցության) տրվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

14. Կրեդիտների փոխանցումը

14.1 Այլ բուհերից ԳՊՀ մագիստրանտի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

14.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ մագիստրանտի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

14.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի ‹կիսամյակ, ուստարի› անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

14.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

15. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

15.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

15.2 Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025-2026 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

Աղյուսակ 6

10 սեպտեմբերի 2025թ. – 14 դեկտեմբերի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	10 սեպտեմբեր
Ուսուցման ավարտ	14 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	24 դեկտեմբերի – 28 դեկտեմբերի
Քննաշրջան	7 հունվարի - 25 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	28 հունվարի – 10 փետրվարի

<u>Գարնանային կիսամյակ</u>

Աղյուսակ 7

11 փետրվարի 2026 թ. – 17 մայիսի 2026թ.	
Ուսուցման սկիզբ	11 փետրվարի
Ուսուցման ավարտ	17 մայիսի
Ստուգարքների հանձնում	27 մայիսի-31 մայիսի
Քննաշրջան	03 հունիսի – 21 հունիսի
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	08 մայիսի - 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	24 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

24/Մ17 Օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցման ոլորտում (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ավարտին ուսանողները ձեռք կբերեն հաղորդակցական կարողությունների համալիր, որը համապատասխանում է **Upper-Intermediate (B2)** մակարդակին: Նրանք կկարողանան արդյունավետորեն ընկալել և վերլուծել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքը՝ ընդգրկելով ժամանակակից հասարակական, մշակութային և մասնագիտական թեմաներ:

Ուսանողները կզարգացնեն ազատ և վստահ արտահայտվելու հմտություններ՝ մասնակցելով քննարկումների, բանավեճերի և ներկայացումների, կարողանալով ձևակերպել և հիմնավորել սեփական կարծիքը՝ օգտագործելով լեզվական հարուստ բառապաշար և բարդ քերականական կառուցվածքներ: Գրավոր խոսքում նրանք կկարողանան ստեղծել կառուցվածքային, համահունչ և փաստարկված տեքստեր՝ պահպանելով համապատասխան ոճն ու ռեգիստրը:

Դասընթացը կնպաստի նաև քննադատական մտածողության, համագործակցության և միջմշակութային հաղորդակցության կարողությունների զարգացմանը՝ ուսանողներին պատրաստելով անգլերեն լեզվով արդյունավետ հաղորդակցման ակադեմիական և մասնագիտական միջավայրերում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա /գիտելիք/՝

- անգլերեն լեզվի **Upper-Intermediate (B2)** մակարդակին համապատասխան բառապաշարի և քերականության խորացված գիտելիքներ,
- ժամանակակից հասարակական, մշակութային և մասնագիտական թեմաների վերաբերյալ տեքստերի բովանդակային ըմբռնում,

- բանավոր և գրավոր խոսքում կիրառվող տարբեր ոճերի և գրանցումների առանձնահատկությունների իմացություն:

Կկարողանա /կարողություն/՝

- հասկանալ և վերլուծել բարդ բանավոր և գրավոր տեքստեր՝ ներառյալ քննարկումներ, հոդվածներ, հարցազրույցներ և զեկույցներ,
- ազատ և հիմնավորված արտահայտել սեփական կարծիքը՝ մասնակցելով քննարկումների, բանավեճերի և ներկայացումների,
- կառուցել տրամաբանական և փաստարկված գրավոր խոսք՝ տարբեր հաղորդակցական նպատակների համար:

Կտիրապետի /հմտություն/՝

- արդյունավետ հաղորդակցվել անգլերեն լեզվով ակադեմիական և մասնագիտական միջավայրերում,
- կիրառել լեզվական միջոցները ճշգրիտ և ճկուն կերպով՝ հաղորդակցական իրավիճակից ելնելով,
- համագործակցել խմբային աշխատանքներում՝ ցուցաբերելով քննադատական մտածողություն և միջմշակութային իրազեկվածություն:

Բովանդակությունը.

Unit 1. Communication. **Unit 2.** Environment. **Unit 3**. Sport. **Unit 4.** Medicine**. Unit 5.** Transport. **Unit 6.** Psychology. **Unit 7.** Architecture. **Unit 8.** Globalisation. **Unit 9.** Art and Photography**. Unit 10.** Literature. **Unit 11.** Culture and Society**. Unit 12.** Technology. **Unit 13.** Challenging someone's ideas. **Unit 14.**Dealing with a problem.

<u>23/Մ2 Գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն</u> (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսումնասիրել գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական հասկացություններն ու առանձնահատկությունները, որոնց իմացությունը սովորողներին թույլ կտա

լիարժեք ըմբռնել այդ գործընթացը, այսինքն՝ այն, թե ինչպես ձևակերպել ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակները, հետազոտության հիմնախնդիրը (պրոբլեմը), ուսումնասիրություններ և գիտափորձեր կատարել, մասնագիտական գրականություն, պատմական, գիտական, նորմատիվ իրավական աղբյուրներ հավաքագրել, ուսումնասիրել և վերլուծել, հիմնախնդրի վերաբերյալ փաստեր հավաքել, վարկածներ առաջադրել ու հիմնավորել, ներկայացնել հիմնավորված եզրակացություններ և նորույթ բովանդակող առաջարկություններ:

Գիտության տարբեր բնագավառներում հետազոտության մեթոդներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ուստի սովորողները համադրում են տարբեր գիտակարգերի առաջարկած մեթոդաբանական գիտելիքները, տարբերակում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ըմբռնում գիտական ճանաչողության գործընթացի յուրահատկությունները**:**

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

«Մեթոդաբանություն և մեթոդ», «գիտական հետազոտություն», «հետազոտության առարկա, օբյեկտ, նպատակ, հիմնախնդիր (պրոբլեմ), վարկած, նորույթ» հասկացությունների բովանդակությունը, էությունը,

Կկարողանա՝

վերլուծել մագիստրոսական թեզի կոնկրետ թեմայի բովանդակությունը և նպատակը, ընտրել իր կատարած հետազոտության մեթոդները, հիմնավորել արդիականությունը, ձևակերպել հետազոտության առարկան ու օբյեկտը, նպատակը, խնդիրները, վարկածը, նորույթը:

Կտիրապետի՝

հետազոտության թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները հիմնավորելու և հետազոտության համար անհրաժեշտ ու առավել նպատակահարմար մեթոդներ ընտրելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հետազոտության մեթոդաբանության էությունը: **Թեմա 2.** Հետազոտության սկզբունքներն ու հիմնախնդիրը (պրոբլեմը): **Թեմա 3.** Հետազոտության վարկածի և հայեցակարգի մշակումը: **Թեմա 4.** Մագիստրոսական թեզի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 5.** Գիտական ճանաչման մեթոդները հետազոտության մեջ:

<u>11/Մ24 Տեղեկատվական տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը մասնագիտական հետազոտություններում</u> (2 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին տրամադրել համապարփակ գիտելիքներ և գործնական կարողություններ մասնագիտական հետազոտություններում տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) և արհեստական բանականության (ԱԲ) կիրառման վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝

1. Սովորեցնել ՏՏ և ամպային գործիքների կիրառումը տվյալների մշակման, վերլուծության, ավտոմատացման և պրեզենտացիաների ստեղծման համար:
2. Բարձրացնել ուսանողների գեներատիվ ԱԲ (GenAI) և prompt engineering-ի հմտությունները, թույլ տալով արդյունավետ հաղորդակցվել ԱԲ մոդելների հետ՝ նորարարական հետազոտական և գործնական լուծումների մշակման նպատակով:
3. Ապահովել հասկացողություն ԱԲ-ի էթիկայի և պատասխանատու կիրառման վերաբերյալ, ներառյալ տվյալների գաղտնիությունը, սոցիալական ազդեցությունը և իրավական խնդիրները:
4. Խթանել հետազոտական մտածողությունը և ստեղծարարությունը, ինտեգրելով ՏՏ և ԱԲ տեխնոլոգիաները հետազոտական նախագծերում, տվյալների վիզուալիզացիայում և մեդիա բովանդակության արտադրությունում:
5. Նպաստել ուսանողների կարողությանը ներկայացնել և պաշտպանել գիտական արդյունքներ տարբեր ձևաչափերով՝ գիտական զեկույց, վեբ կայք, ինֆոգրաֆիկա կամ պրեզենտացիա:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Նկարագրել տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաների կառուցվածքն ու դերը գիտահետազոտական գործունեության մեջ:
2. Բացատրել գեներատիվ ԱԲ մոդելների հիմնական սկզբունքները, կիրառությունները և սահմանափակումները:

3. Բնութագրել ամպային և տվյալների վերլուծության տեխնոլոգիաների կիրառման մեթոդները հետազոտական գործընթացներում:
4. Ճանաչել ԱԲ հրահանգների մշակման (Prompt Engineering) մեխանիզմները և դրանց կառուցվածքային տարրերը:
5. Վերլուծել ԱԲ-ի ազդեցությունը տնտեսության, կրթության և գիտության վրա՝ հիմնվելով ժամանակակից զեկույցների և ուսումնասիրությունների վրա:
6. Բնութագրել ԱԲ-ի էթիկական հիմնախնդիրները, տվյալների գաղտնիության, վստահության և սոցիալական պատասխանատվության սկզբունքները:
7. Նկարագրել ԱԲ մարտահրավերները՝ կապված աշխատանքային շուկայի, մարդկային որոշումների և տեխնոլոգիական կախվածության հետ:

Կկարողանա՝

1. Կիրառել տեղեկատվական և արհեստական բանականության տեխնոլոգիաներ՝ հետազոտական գործընթացների կազմակերպման և տվյալների մշակման մեջ:
2. Օգտագործել գեներատիվ ԱԲ գործիքներ՝ տեքստերի, ամփոփագրերի, վերլուծական հաշվետվությունների և ներկայացումների ստեղծման համար:
3. Կազմել և ձևակերպել արդյունավետ prompt-ներ՝ կիրառելով RACE, TAG, TRACE, CARE և այլ շրջանակներ:
4. Գնահատել և բարելավել ԱԲ մոդելի պատասխանների որակը՝ օգտագործելով SALT և LARF մոտեցումները:
5. Իրականացնել խորքային հետազոտություններ (Deep Research)՝ կիրառելով ChatGPT, Claude, Gemini, Perplexity.ai և այլ գործիքներ:
6. Գեներացնել մեդիա բովանդակություն (պաստառ, վիդեո, ձայն, կայք)՝ առանց ծրագրավորման (no-code) ԱԲ գործիքներով:
7. Քննարկել և վերլուծել ԱԲ էթիկական խնդիրները՝ հիմնվելով իրական կիրառությունների և օրինակների վրա:
8. Կիրառել պատասխանատու և էթիկորեն ընդունելի մոտեցումներ՝ ԱԲ գործիքների ընտրության և արդյունքների մեկնաբանման ժամանակ:
9. Կազմակերպել տվյալների հավաքագրում, մշակում և վիզուալիզացիա՝ օգտագործելով ժամանակակից SS և ԱԲ գործիքներ:

10. Մշակել բիզնես գործընթացների ավտոմատացման նախագծեր՝ make.com, n8n և նման գործիքների միջոցով:

Կտիրապետի՝

1. Ինտեգրել ԱԲ և ՏՏ տեխնոլոգիաները գիտահետազոտական, կրթական և բիզնես միջավայրում՝ ստեղծելով նորարարական լուծումներ:
2. Վերլուծել և մեկնաբանել ԱԲ մոդելների ստեղծած արդյունքները՝ հիմնվելով տվյալների որակի և վավերականության չափանիշների վրա:
3. Գեներացնել և ներկայացնել հետազոտական արդյունքներ՝ վեբ-կայքերի, ինֆոգրաֆիկների և ներկայացումների ձևաչափով:
4. Համագործակցել և հաղորդակցվել թվային միջավայրում՝ կիրառելով ԱԲ գործիքներ թիմային հետազոտությունների և նախագծերի կառավարման մեջ:
5. Գնահատել և ընտրել առավել համապատասխան ԱԲ և ՏՏ գործիքները՝ տվյալ հետազոտության կամ կիրառության համար:
6. Գնահատել և ընտրել ամենահամապատասխան ՏՏ և ԱԲ գործիքները՝ հաշվի առնելով տվյալ խնդրի էթիկական և պրոֆեսիոնալ պահանջները:
7. Խթանել պատասխանատու, էթիկապես կայուն ԱԲ մշակույթ՝ հետազոտական և գործնական միջավայրերում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ (ՏՏ): **Թեմա 2.** Արհեստական բանականություն (ԱԲ): **Թեմա 3.** Ամպային տեխնոլոգիաներ : **Թեմա 4.** ԱԲ հրահանգների մշակման (Prompt Engineering) հիմունքներ: **Թեմա 5.** Հետազոտությունների իրականացում, փաստաթղթերի վերլուծություն և ամփոփում: **Թեմա 6.** Ցուցադրությունների պատրաստման ԱԲ տեխնոլոգիաներ: **Թեմա 7.** Մեդիա բովանդակության մշակման ԱԲ տեխնոլոգիաներ:**Թեմա 8.** Տվյալների մշակման և վերլուծության տեխնոլոգիաներ: **Թեմա 9.** Բիզնես պրոցեսների ավտոմատացում: **Թեմա 10.** Արհեստական բանականության էթիկա և մարտահրավերներ:

2. Մասնագիտացված պատրաստման դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

14/Մ3 Բիզնեսի իրավական կարգավորման հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (24 ժամ դասախոսություն, 4 գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Ուսանողներին փոխանցել գիտելիքներ բիզնես գործընթացների իրավական կարգավորման կառուցակարգի վերաբերյալ, ձևավորել ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական հիմքերի իմացություն:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- ՀՀ-ում բիզնեսի հարկման մեխանիզմների կարգավորումների հնարավոր թերությունները, բիզնեսի վրա ծանր հարկային բեռի, գների անկայունության և կոռուպցիայի բարձր ցուցանիշների ազդեցությունը, մրցակցային ոչ բարենպաստ պայմանների ազդեցությունը, ներդրումային միջավայրի, ձեռնարկատիրության ընդլայնման և վարկավորման սահմանափակումները և այլն:
- ՀՀ-ում ձեռնարկատիրության կազմակերպման սկզբունքները, անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի կազմակերպաիրավական տարբերությունները, կանոնադրական կապիտալի կազմավորման վերաբերյալ հիմունքները, անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի վերակազմակերպման սնանկության ու լուծարման գործընթացները և այլն:
- ՀՀ-ում ձեռնարկատիրության հարկման համակարգերը, առանձին հարկատեսակների հաշվետվական համակարգերը և հարկերի գանձման մեխանիզմները, ֆինանսական վերահսկողության առանձնահատկությունները և հարկային հսկողության սկզբունքները, հարկերից խուսափելու կամ թաքցնելու պատասխանատվության միջոցներին և այլն:
- ժամանակակից ձեռնարկատիրության վարման ուղենիշերը որպես բիզնեսի հոգեբանություն, ՀՀ-ում բիզնեսի իրավական հիմքերը և էթիկական կողմերը, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության և էթիկայի խնդիրները, բիզնեսում կառավարչական որոշումների

կայացման վրա ազդեցություն ունեցող սուբյեկտների շրջանակը և բիզնեսի սուբյեկտների փոխհարաբերությունները, կազմակերպության զարգացման և անկման ընթացքները և այլն:

- շահույթի ստացման, սեփական կապիտալի (զուտ ակտիվների) ձևավորման մեխանիզմները, ինչպես նաև ստացված շահույթի բաշխման կամ վերաներդրման քայլերը, կորպորատիվ կառավարման նպատակները, շահույթի բաշխման հետ կապված խնդիրները և այլն:
- շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները, ընկերության շուկայական արժեքի վրա դրա ազդեցության մեխանիզմները, ներդրողների շահերի պաշտպանության տեսանկյունից արդյունավետ շահութաբաժնային քաղաքականության և շահույթի կառավարման հարցերը և այլն:
- բիզնեսի կողմից ֆինանսական միջոցների ներգրավման ձևերը, վարկային պայմանագրերում սահմանված կողմերի պատասխանատվությունը, վարկատուի և վարկառուի միջև ծագած անհամաձայնությունները և պայմանագրի խախտման իրավական հետևանքները:

Կկարողանա՝

- տարբերակել ՀՀ-ում ձեռնարկատիրությանը խոչընդոտող գործոնները, և դրանց ազդեցության սահմանները:
- տարբերակել անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի ստեղծման, վերակազմակերպման, լուծարման մեխանիզմները:
- տարբերակել ՀՀ-ում հարկման համակարգերը և դրանցում ներառված հարկատեսակները, հեռակա հաշվետվողականության և ստուգումների իրականացման մեխանիզմները:
- սահմանել ձեռնարկատիրության վարման ուղենիշերը, ինչպես նաև իրավական հիմքերի և սոցիալական պատասխանատվության շրջանակը:
- սահմանել կազմակերպության սեփական կապիտալը, կորպորատիվ կառավարում հասկացությունը, ներկայացնել շահույթի ստացման և բաշխման մեխանիզմները:
- տարբերել շահութաբաժնային քաղաքականության իրականացման տարբեր մեխանիզմները և ներդրողների շահերի պաշտպանության հիմնական սկզբունքները:
- տարբերել ֆինանսական միջոցների ներգրավման ձևերը, վերլուծել փոխառության պայմանագրի խախտման հետևանքները:

Կտիրապետի՝

- հաջող բիզնես միջավայրի ստեղծման մեթոդաբանությանը:
- բիզնեսի կազմակերպման մոտեցումներին:

- բիզնեսի հարկման տարբերակված մոտեցումներին և բիզնեսում ֆինանսական բնույթի խախտումների պետական վերահսկողության համակարգերին:
- ձեռնարկատիրության համակարգային, աշխարհայացքային և սոցիալական հիմունքների որոնման մեթոդներին:
- ձեռնարկատիրության արդյունքի ստացման և հաշվառման ընդհանուր մոտեցումներին:
- կոնկրետ շահութաբաժնային քաղաքականության ընտրության մոտեցումներին:
- բիզնեսի ֆինանսավորման առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները: **Թեմա 2.** Իրավաբանական անձի ստեղծումն ու լուծարումը: **Թեմա 3.** Հայաստանի Հանրապետությունում հարկման համակարգերը: ՀՀ հարկային օրենսգրքի կարգավորումները: **Թեմա 4.** Բիզնեսի հոգեբանություն. ձեռնարկատիրության վարման սկզբունքները: **Թեմա 5.** Շահույթի բաշխման առանձնահատկությունները և խնդիրները: **Թեմա 6.** Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը: **Թեմա 7.** Բիզնեսի ֆինանսավորման խնդիրները:

<u>12/Մ5 Էկոնոմետրիկա</u> (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ծանոթացնել սոցիալ-տնտեսական երևույթների միջև փոխկախվածությունների վերլուծության և կանխատեսման էկոնոմետրիկ մեթոդներին, տեղեկացնել էկոնոմետրիկ վերլուծության արդյունքների մեկնաբանման առանձնահատկություններին:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- բացատրել էկոնոմետրիկ վերլուծության հիմնական փուլերը, հիմնավորել ուսումնասիրվող երևույթների միջև կապի ձևը և ուղղությունը, ինչպես նաև ընտրված էկոնոմետրիկ վերլուծության մեթոդը:

Կկարողանա՝

- Օգտագործել էկոնոմետրիկ վերլուծության մեթոդները,

- Կատարել էկոնոմետրիկ վերլուծություններ վիճակագրական ծրագրերի միջոցով:
- Բացատրել և գնահատել ստացված արդյունքները:

Կտիրապետի՝

- մշակել վիճակագրական տվյալները,
- կառուցել էկոնոմետրիկ մոդելներ,
- կատարել բովանդակալի եզրակացություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էկոնոմետրիկա առարկան: **Թեմա 2.** Երկչափ ռեգրեսիա և կոռելյացիա: **Թեմա 3.** Բազմաչափ ռեգրեսիա և կոռելյացիա: **Թեմա 4.** Ֆիկտիվ փոփոխականներով ռեգրեսիոն մոդելներ: **Թեմա 5.** Մնացորդների հետերոսկեդաստիկություն: **Թեմա 6.** Ժամանակային շարքերի վերլուծություն:

<u>12/Մ14 Տնտեսագիտության փիլիսոփայություն</u> (3 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (24 ժամ դասախոսություն, 4 սեմինար)

4-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողի մոտ զարգացնել տնտեսագիտական հասկացությունների համակարգի ժամանակակից մոտեցումները՝ դրանք իմաստավորելով և դիտարկելով որպես կյանքի ու հասարակության կարևորագույն արժեքներ, ինչպես նաև կարևորել հասարակական կյանքում սոցիալական փիլիսոփայության դերը՝ որպես սոցիալ-տնտեսական ոլորտներում տնտեսական իրողությունների ընկալման մեթոդաբանության:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- տնտեսագիտության փիլիսոփայության հիմունքները,
- տնտեսագիտության փիլիսոփայության հիմքերը դասական փիլիսոփայության մեջ,
- գիտական գիտելիքների համակարգի և հասարակական մտածողական զարգացման օրենքները,
- 20-21-րդ դարի սահմանագծին փիլիսոփայական հիմնահարցերի կատարվող վերափոխումների, որը շոշափում է հասարակության բոլոր շերտերի շահերը,

- տնտեսագիտական հասկացությունների /գործունեություն, շահեր, արտադրողականություն, պահանջմունքներ, սեփականություն/ փիլիսոփայական մեկնաբանությունները:

Կկարողանա՝

- ներկայացնել փիլիսոփայական մտքի զարգացումը,
- կիրառել փիլիսոփայական մոտեցում և մտածողության գործիքներ,
- հասցնելու գործողությունը ավարտին և համընկեցնելու վերջնական արդյունքը նպատակին:

Կտիրապետի՝

- Պահանջմունքների բավարարումը քննարկել և գործնականում կիրառել ելնելով փիլիսոփայական հասկացություններից և օրենքներից՝ կիրառելով շուկայական տնտեսության սկզբունքերը,
- սոցիալական խնդիրների լուծման համատեքստում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ դերին,
- հասարակական կյանքում փիլիսոփայության սոցիալական դերին,

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության փիլիսոփայության առարկան և մեթոդը, տեղը սոցիալական և հումանիտար գիտությունների համակարգում: **Թեմա 2.** Տնտեսագիտության փիլիսոփայության վերլուծության մեթոդաբանությունը: **Թեմա 3.** Տնտեսագիտական հասկացությունների փիլիսոփայական կողմերի վերլուծությունը: **Թեմա 4.** Պահանջմունքների, շահերի գործունեության փիլիսոփայությունը: **Թեմա 5.** Աշխատանքի փիլիսոփայություն, հասարակության հոգևոր կյանքը: **Թեմա 6.** Սեփականության սոցիալ-փիլիսոփայական ըմբռնումը: **Թեմա 7.** Աշխատանքի արտադրողականությունը որպես փիլիսոփայական վերլուծության օբյեկտ: **Թեմա 8.** Մտավոր /ինտելեկտուալ/ սեփականության փիլիսոփայությունը: **Թեմա 9.** Տնտեսական զարգացման և բնապահպանական կայունության փոխլրացման փիլիսոփայությունը: **Թեմա 10.** Փողը՝ որպես սոցիալ – փիլիսոփայական երևույթ: **Թեմա 11.** Փողն առօրյա կյանքում, շռայլություն, խնայողություն և պարտք: : Փողը՝ որպես հոգեբանական ուսումնասիրության օբյեկտ:

<u>12/Մ11 Նախագծի կառավարում</u> (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը՝

Դասընթացի նպատակն է՝ **ապահովել** ուսանողների մոտ համակարգված գիտելիքներ և գործնական հմտություններ նախագծերի պլանավորման և կառավարման գործընթացներում՝ հիմնված PRINCE2 մեթոդաբանության վրա՝ ներառելով սկզբունքներ, թեմաներ, գործընթացներ և գործիքներ՝ արդյունավետ նախագծեր նախաձեռնելու, իրականացնելու, վերահսկելու և ավարտին հասցնելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Նախագծերի պլանավորման, կառուցման և կառավարման սկզբունքները:
- Նախագծերի կյանքի ցիկլը և նրա փուլերը՝ ըստ PRINCE2 մեթոդաբանության:
- PRINCE2-ի 7 սկզբունքները, 7 թեմաները և 7 գործընթացները, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունները տարբեր ոլորտներում:
- Հիշյալ մեթոդաբանության շրջանակում նախագծային թիմերի կազմավորման և կառավարման պահանջները:
- Շահագրգիռ կողմերի քարտեզագրման, ներգրավման և հաղորդակցության մեթոդները:
- Ծրագրի ծախսերի գնահատման հիմնական մոտեցումները՝ ներառյալ դրանց կիրառությունը նախագծային որոշումների մեջ:

Կկարողանա՝

- Գործնականում կիրառել PRINCE2 մեթոդաբանության փուլային մոտեցումը նախագծի ամբողջ տևողության ընթացքում:
- Կազմել և կառավարել **«բիզնես դեպք»,** և դրանից բխող փաստաթղթային փաթեթներ:
- Պլանավորել և իրականացնել նախագծային գործընթացների վերահսկում, ռեսուրսների բաշխում և ժամանակացույցի կառավարում:
- Վերլուծել ու ներկայացնել նախագծի ֆինանսական հարցադրումները շահագրգիռ կողմերին՝ հիմնված նախագծի բյուջեի և հաշվարկների վրա:
- Կիրառել հարմարեցված (հանդուրժողականության սահմաններում) մոտեցումներ ըստ նախագծի միջավայրի, ծավալի և ռիսկայնության:

Կտիրապետի՝

- Նախագծային կառավարման գործիքների և ծրագրային լուծումների՝ նախագծի արդյունավետությունը բարձրացնելու համար (օր.՝ Գանտի աղյուսակ, MosCow և PRINCE2 այլ գործիքներ):
- Ռիսկերի նվազեցման և հնարավորությունների օգտագործման ռազմավարությունների:
- Տվյալների հավաքագրման, հաշվետվությունների և մոնիթորինգի համակարգված կիրառման մեթոդների՝ ըստ PRINCE2-ի պահանջների:
- Թիմի, ղեկավարության և արտաքին շահառուների հետ հաղորդակցության մեթոդների:
- Նախագծի փաստաթղթավորման անհրաժեշտ փաթեթին:

Բովանդակությունը.

«Նախագծի կառավարման» կառուցվածք և շրջանակ, նախագծի սահմանումներ և հիմնական բնութագրիչներ: «Նախագծի կառավարման» մեթոդներ. ծանոթացում PRINCE2- ին ՝ նախագծի հարմարեցում ծրագրային միջավայրին: Ծրագրի կենսացիկլ՝ 4 փուլեր: «Նախագծի կառավարման» սկզբունքներ՝ 7 սկզբունքների ներկայացում: **Թեմա 1**. Բիզնես իրավիճակ. նպատակ, սահմանում, նախագծի կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: **Թեմա 2.** Կազմակերպություն. նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: Կազմակերպություն: Ինչպե՞ս ձևավորել նախագծի կառավարման թիմ. թիմի ստեղծման վարժանք: **Թեմա 3.** Որակ. նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: Որակի գործնական վարժություն.չափորոշիչների սահմանում: **Թեմա 4.** Պլաններ. նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: **Թեմա 5.** Ռիսկ. նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: **Թեմա 6.** Փոփոխություններ: Նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում: **Թեմա 7.** Զարգացում. նպատակ, սահմանում, կառավարման մոտեցումներ և պարտավորություններ/ պատասխանատվություն թեմայի շրջանակներում:

Ծանոթացում նախագծի կառավարման 7 փուլերին: նախագծի սկիզբ, նախագծի վարում, նախագծի նախաձեռնում, փուլերի ղեկավարում արտադրանքի մատակարարման կառավարում, սահմանների կառավարում:

21/Մ13 Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ծանոթացնել մտավոր սեփականության հասկացությանը, մտավոր սեփականության իրավական կարգավորման ինստիտուտներին:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

հեղինակային և արտոնագրային իրավունքով կարգավորվող հարաբերությունների առանձնահատկությունները, քաղաքացիական շրջանառության մասնակիցների ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների իրավական պահպանության առանձնահատկությունները:

Կկարողանա՝

հասկանալ մտավոր սեփականության իրավունքի ոչ ավանդական օբյեկտների իրավական պահպանության առանձնահատկությունները, ներկայացնել մտավոր սեփականության իրավատերերի իրավունքները և դրանց կարգավորման առանձնահատկությունները, նկարագրել մտավոր սեփականության իրավունքներին առնչվող վեճերի լուծման հիմնական ձևերը:

Կտիրապետի՝

անբարեխիղճ մրցակցությունից մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մտավոր սեփականության հասկացությունը և իրավական կարգավորման համակարգը: **Թեմա 2**. Հեղինակային իրավունքի հիմնադրույթները: **Թեմա 3**. Հարակից իրավունքների պահպանությունը: **Թեմա 4.** Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը: **Թեմա 5.** Արտոնագրային իրավունքի հիմնադրույթները: **Թեմա 6.** Հեղինակների և արտոնագրատերերի

իրավունքների իրականացման և պաշտպանության կարգը: **Թեմա 7.** Քաղաքացիական շրջանառության մասնակիցների ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների իրավական պահպանությունը: **Թեմա 8.** Մտավոր սեփականության իրավունքի ոչ ավանդական օբյեկտների իրավական պահպանությունը: **Թեմա 9.** Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը անբարեխիղճ մրցակցությունից: **Թեմա 10.** Հեղինակային և արդյունաբերական սեփականության իրավունքների կարգավորման առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում:

<u>14/Մ6 Հաշվապահական հաշվառման արդի հիմնախնդիրները ֆինանսական կազմակերպություններում</u> (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

մագիստրանտների ուսումնառության համար գիտելիքներ փոխանցել առևտրային բանկերում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների հիմնախնդիրների վերաբարյալ՝ ՀՀՄՍ-երի, ՖՀՄՍ-երի ինչպես նաև ՀՀ-ում բանկային գործունեության և դրա հաշվառումը ու հաշվետվությունը կարգավորող դաշտի պահանջների շրջանակներում: Բանկերի գործունեության առանձնահատկությունները առաջ են բերում նաև հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների առանձնահատկություններ, որոնք էական տարբերություններ ունեն այլ ճյուղերի մոտեցումներից: Բացի հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների պահանջներից, բանկային գործունեությունը խիստ կանոնակարգված է և գտնվում է պետական անընդհատ վերահսկողության ներքո, որը նույնպես իր յուրահատուկ պահանջներն է դնում բանկային հաշվառման կազմակերպման առջև: Դասընթացի միջոցով մագիստրանտներին ներկայացվում են առևտրային բանկերում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվության տեսական, անհրաժեշտ օրենսդրական և կիրառական գիտելիքներ, մոտեցումներ, սկզբունքներ և հիմնախնդիրներ, որոնց յուրացման արդյունքում նրանք հստակ կհասկանան բանկային հաշվառման խնդիրները, կկարողանան վարել բանկային ծառայությունների և այլ գործառնությունների սինթետիկ հաշվառումը, ճանաչումը, չափումը, արտացոլումը հաշվառման ու հաշվետվության մեջ՝ միջազգային ստանդարտների մեկնաբանմամբ, կկարողանան

իրականացնել բանկերի ֆինանսական վիճակի մասին, համապարփակ ֆինանսական արդյունքի մասին և այլ ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ցուցանիշների արտացոլումը, վերլուծել այդ հաշվետվությունների տեղեկատվությունը:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Բանկային հաշվառման կազմակերպման սկզբունքները
2. Բանկային հաշվառման համար ստանդարտների պահանջներ և կարգավորումները
3. Ավանդային գործառնությունների հաշվառման մեթոդական հիմքերը
4. Դրամական գործառնությունների հաշվառման մեթոդական հիմքերը
5. Արտարժութային գործառնությունների հաշվառման մեթոդական հիմքերը
6. Վարկային և այլ գործառնությունների հաշվառման մեթոդական հիմքերը
7. Լիզինգային գործառնությունների հաշվառման մեթոդական հիմքերը
8. Ֆին. գործիքների ստանդարտների պահանջների կիրառում գործնականումը
9. Ֆին. արդյունքների և կապիտալի հաշվառման մեթոդական հիմքերը
10. Բանկերի ֆինանսական հաշվետվողականության կազմակերպման սկզբունքները

Կկարողանա (կարողություն)

1. ըստ օրենքների և ստանդարտների կազմակերպել բանկային հաշվառում
2. Ստանդարտների պահանջների գնահատում և վերլուծություն
3. Կազմակերպել ավանդային գործառնությունների հաշվառում և հաշվետվություն
4. Կազմակերպել կանխիկ և անկանկիկ գործարքների հաշվառում
5. Կազմակերպել արտարժույթով գործարքների հաշվառում և հաշվետվություն
6. Կազմակերպել ակտիվային գործառնությունների հաշվառում
7. Կազմակերպել վարձակալության գործառնությունների հաշվառում
8. Ֆին. գործիքների դասակարգման, գնահատման և հաշվառման կազմակերպում
9. Կազմակերպել կապիտալի հոդվածների գործառնությունների հաշվառում
10. Հաշվետվությունների կազում և ներկայացում

Կտիրապետի՝

1. Կիրառել բանկային հաշվառման կազմակերպման գործիքակազմը
2. Ստանդարտների պահանջների կիրառում գործնականում

3. Կատարել հաշվարկներ, ձևակերպումներ և պատրաստել հաշվետվություն
4. Կատարել հաշվարկներ, ձևակերպումներ և հաշվետվություն ներկայացնել
5. Ձևակերպել գործառնությունները և ներկայացնել հաշվետվություն
6. Հաշվարկներ, ձևակերպումներ, վերլուծություն, հաշվետվություն
7. Հաշվարկներ, ձևակերպումներ, վերլուծություն, հաշվետվություն
8. Հաշվարկների, ձևակերպումների, վերլուծության և հաշվետվության կատարում
9. Հաշվարկներ, ձևակերպումներ, վերլուծություն, հաշվետվություն
10. Հաշվետու ցուցանիշների հաշվարկում, գնահատում, վերլուծություն

Բովանդակությունը.

Թեմա 1. Բանկային հաշվառման բովանդակությունը և կազմակերպումը **Թեմա 2.** ՀՀՄՍ-երի և ՖՀՄՍ-երի կիրառումը բանկային հաշվառման համակարգում **Թեմա 3.** Ավանդների և միջոցների ներգրավման այլ գործառնությունների հաշվառումը **Թեմա 4.** Կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների և դրանց համարժեքների հոսքերի հաշվառումը **Թեմա 5.** Արտարժութային գործառնությունների հաշվառման և հաշվետվության առանձնահատկությունները **Թեմա 6.** Վարկային և միջոցների տեղաբաշխման այլ գործառնությունների հաշվառումը **Թեմա 7.** Ֆինանսական վարձակալության /լիզինգի/ գործառնությունների հաշվառումը **Թեմա 8.** Ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ներդրումների և արժեթղթերով կատարվող գործառնությունների հաշվառումը **Թեմա 9.** Բանկերի եկամուտների ու ծախսերի և կապիտալի հաշվառումը: **ԹԵՄԱ 10.** Բանկերի ֆինանսական և այլ հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը:

<u>12/Մ16 Տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրները</u> (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

դիտարկել հանրային /պետական/ հատվածի տնտեսագիտությունը և տնտեսության պետական կարգավորման հիմնական մեխանիզմները: Այս պարագայում մագիստրոսները ստանալով հենքային ընդհանուր գիտելիքներ՝ տիրապետում են վճարահաշվարկային համակարգի

կարգավորման սկզբունքներին, ձեռք են բերում համակարգային փոփոխությունները գնահատելու և ռազմավարություններ մշակելու ունակություններ, տնտեսության գլոբալ զարգացումների իմացություն, հասարակական գործընթացները և տնտեսական հիմնախնդիրները վերհանելու կարողություններ, վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա տնտեսության մակրոտնտեսական վիճակը բնութագրելու, տեսության և պրակտիկայի զարգացումներին և զարգացման միտումներին քննադատաբար վերաբերվելու, հետազոտության արդյունքները գիտականորեն վերլուծելու ու մեկնաբանելու, տնտեսության իրական հատվածը օբյեկտիվ գնահատելու հմտություններ: Դասընթացն ունի տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրների բացահայտման վերաբերյալ բազմակողմանի իմացություն ապահովելու ուղղվածություն: **Դասընթացի ավարտին ուսանողը**

Կիմանա՝

տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը և պատճառները, պետության դերին վերաբերող տեսությունները, դրանց առանձնահատկությունները և բնորոշ գծերը, պետության տնտեսական գործառույթը՝ մարդկային զարգացման համատեքստում, մարդկային կայուն զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները, տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխառնչությունները, պետության դերը միջազգայյին առևտրի կարգավորման գործում, պետության տնտեսական մրցակցության առանձնահատկությունները, գյուղատնտեսական հողերի գնահատման մեթոդները և ցուցանիշները, հողի շուկայի մրցակցային դաշտի ձևավորման հիմունքները, արդյունաբերության զարգացման օրինաչափություններն ու խնդիրները, տրանսպորտի և կապի գործունեության գնահատման ցուցանիշները, կապիտալ շինարարության զարգացման ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը, զբոսաշրջության զարգացման նախադրյալներն ու հիմնական գործոններ, գիտատեխնիկական պետական քաղաքականության հիմունքները, նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման համակարգը:

Կկարողանա՝

վերլուծել պետության տնտեսական գործունեության հիմնական գործառույթները, մեկնաբանել բնական ռեսուրսներով մարդկանց ապահովվածության հիմնախնդիրները և նախանշել ռացիոնալ բնօգտագործման կարևորությունը, վերհանել երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները, դիտարկել մարդկային կապիտալի վերարտադրության ժամանակակից միտումները, ներկայացնել պետության և իրավունքի դերը մարդկային

զարգացման գործընթացում, ներկայացնել և վերլուծել միջազգային առևտրում պայմանագրային գների պետական կարգավորման հիմնահարցերը, վերհանել Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության հիմնախնդիրները, բացահայտել ագրարային ոլորտում առկա ռիսկերը, վերլուծել գյուղատնտեսության ոլորտում պետական կարգավորման արդի հիմնախնդիրները, վերհանել առևտրի և հասարակական սննդի պետական կարգավորման հիմնահարցերը, բացահայտել տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, վերլուծել կապիտալ շինարարության զարգացման ցուցանիշները, կատարել զբոսաշրջության միջազգային փորձի վերլուծություն, լուսաբանել զբոսաշրջության պետական կարգավորման նպատակներն ու խնդիրները, վերլուծել նորամուծական գործունեության ենթակառուցվածքի ձևավորման մեխանիզմները:

Կտիրապետի՝

տնտեսական տատանումների կանխման մեխանիզմներին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին՝ ՄԱԿ-ի գագաթնաժողովների որոշումների լույսի ներքո, պետության տնտեսական գործառույթի իրականացման կառուցակարգերին՝ մարդկային զարգացման համատեքստում, աշխատանքի, զբաղվածության և մարդկային զարգացման փոխառնչությունների գնահատման կառուցակարգին, մարդկային զարգացման գործընթացում պետության և իրավունքի կազմակերպիչ-կարգավորիչ-ուղղորդող գործառույթների իրականացման սկզբունքներին ու կառուցակարգերին, միջազգային առևտրում պայմանագրային գների կարգավորման հիմունքներին, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականության հիմնախնդիրներին՝ Մ. Պորտերի տեսության լույսի ներքո, ՀՀ-ում ագրոպարենային համակարգի վիճակին ու խնդիրներին, ՀՀ-ում արդյունաբերական արտադրության զարգացման ռազմավարության հիմունքներին, տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության հիմնական դրույթներին, ՀՀ-ում զբոսաշրջության պետական կարգավորման ուղղություններին, նորամուծական գործունեության պետական կարգավորման հիմունքներին, մտավոր սեփականության շուկայի կարգավորման հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Պետության դերին վերաբերող տեսությունները: Տնտեսության պետական կարգավորման քաղաքականության առանձնահատկությունները: **Թեմա 2.** Մարդկային զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները: **Թեմա 3.** Մարդկային զարգացման

տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական բաղադրիչները: **Թեմա 4.** Պետության սոցիալական առաքելության հայեցակարգը մարդկային զարգացման համատեքստում: **Թեմա 5.** Համաշխարհային գներ: Պետության դերը միջազգային առևտրի կարգավորման գործում: **Թեմա 6.** Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության հիմնախնդիրները: **Թեմա 7.** Պետական կարգավորման արդի հիմնախնդիրները գյուղատնտեսության բնագավառում: **Թեմա 8.** Արդյունաբերական քաղաքականությունը: Արդյունաբերական արտադրության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 9.** Մակրոտնտեսակամ քաղաքականությունն արտադրական ենթակառուցվածքների ճյուղերում: **Թեմա 10.** Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 11.** Գիտատեխնիկական պետական քաղաքականությունը և նորամուծական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում:

<u>12/Մ15 Տնտեսական սոցիոլոգիա</u> (2 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 գործնական)

3-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակը.

«Տնտեսական սոցիոլոգիա» դասընթացի յուրացման նպատակներն են.

- արդի տնտեսական սոցիոլոգիայի հիմնական մոտեցումների և նրա ելակետային հետազոտական խնդիրների վերաբերյալ գիտելիքների ընդլայնումը,
- ուսանողների մոտ տնտեսական երևույթների վերլուծման հանդեպ սոցիոլոգիական մոտեցման, տնտեսության առաջացման, էվոլյուցիայի, գոյության և զարգացման հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ հստակ պատկերացումների ձևավորումը:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- ժամանակակից տնտեսական սոցիոլոգիայի հիմնական մոտեցումները և նրա ելակետային հետազոտական խնդիրները,
- սոցիալական և տնտեսական վերլուծության հիմնական մեթոդները,
- սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությունը:

Կկարողանա՝

- տնտեսական սոցիոլոգիայի շրջանակներում վերլուծել տեսական աղբյուրները,
- տնտեսական երևույթների վերլուծման ժամանակ կիրառել տարբեր մոտեցումներ,
- տնտեսական սոցիոլոգիայի հետազոտման ոլորտի շրջանակներում ինքնուրույն ձևավորել էմպիրիկ հետազոտության թեմա և աշխատել վերջինիս իրականացման ուղղությամբ,
- վերարտադրել սոցիալ-տնտեսական հետազոտությունների տվյալները,
- դրված նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ գնահատել կատարված հետազոտության որակը,
- օգտագործել իր գիտելիքները գործնականում:

Կտիրապետի՝

- սոցիալ-տնտեսական մտածողության հմտություններին,
- սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների գիտական վերլուծման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խորհրդային տնտեսական սոցիոլոգիայի պատմածագումնաբանական նախադրյալները: Տնտեսական վարքագիծն ու տնտեսական գործողությունը՝ որպես տնտեսական սոցիոլոգիայի առարկաներ: **Թեմա 2.** Գործունեության արտեֆակտ միջնորդավորումը և սոցիալ մշակութային գործոնները տնտեսական վարքագծում: Մարդու էությունը տնտեսագիտության դասականների աշխատություններում: **Թեմա 3.** Մարդը նեոդասական և ժամանակակից մոտեցումներում: Մարդը ինստիտուցիոնալ տնտեսագիտության մեջ: **Թեմա 4.** Ազատական տնտեսագիության քննադատությունը սոցիալիստների աշխատանքներում: Տնտեսական գործունեության սոցիոլոգիան Կ.մարքսի, Է. Դյուրկհեյմի և Մ.Վեբերի աշխատություններում: **Թեմա 5.** Տնտեսական գործունեության սոցիոլոգիան Կ.մարքսի, Է. Դյուրկհեյմի և Մ.Վեբերի աշխատություններում: **Թեմա 6.** Անցումային հայեցակարգային հիմունքները: Գաղափարակիր հասարակությունից անցում սպառողական հասարակության: **Թեմա 7.** Անցումային հանրությունը սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում: Տնտեսական վարքագծի նկատմամբ գիտական մոտեցման արժեքային հիմունքները: **Թեմա 8.** Սոցիալ տնտեսական մոտեցումն արժեհամակարգի նկատմամբ: Արժեքների դինամիկան անցումային հասարակությունում: **Թեմա 9.** Նորմ հասկացությունը սոցիոլոգիայում: Սոցիալական նորմերի դասակարգումները: Սոցիալական նորմերը և տնտեսական վարքագծի կանոնակարգումը: **Թեմա 10.** Կազմակերպություններ. Հասկացություններ, վարքագիծն ու դերակատարումը; Կազմակերպությունների սոցիալական կառուցվածքը: Իշխանությունը կազմակերպություններում: **Թեմա 11.** Հետխորհրդային

հասարակությունում սոցիալական ինքնության որոնման հայեցակարգային հիմունքները: **Թեմա 12.** Վերազգային և էթնիկ ինքությունը: **Թեմա 13.** Սոցիալական ինքնության հիմնախնդիրը սոցիոլոգիայում: **Թեմա 14.** Աշխատանքի սոցիալ-մշակութային արժևորում:

12/Մ3 Գործարար հաղորդակցում (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝

ներկայացնել հաղորդակցման ունակությունների. հմտությունների դերը կազմակերպությունների և ընկերությունների վարկանիշի ձևավորման, մրցունակության ու շահութաբերության ապահովման գործում, նկարագրել ժամանակակից հաղորդակցման միջոցները: Այս պարագայում մագիստրոսները ստանալով հենքային ընդհանուր գիտելիքներ՝ կկարողանան՝ լավ պատկերացնել հաղորդակցման ունակությունների դերը գործնական հաղորդակցման, կազմակերպության վարկանիշի ձևավորման և շահութաբերության ապահովման գործում, բացատրել հաճախորդների հետ հաղորդակցման սկզբունքները, պատկերացում կազմել ժամանակակից հաղորդակցության միջոցների և նրանց կիրառման առանձնահատկությունների մասին: Ուսումնառության ընթացքում ուսանողները ձեռք են բերում միջանձնային հարաբերությունների կառուցման, կազմակերպչական աշխատանք կատարելու, ղեկավարի դեր ստանձնելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու, բանակցություններ վարելու հմտություններ, գործարար միջավայրի արժեքային համակարգը գնահատելու և բարելավելու ունակություններ, կոնֆլիկտների լուծման, սոցիալական դյուրաշարժության, հասարակական գործընթացներն ու տնտեսական հիմնախնդիրները վերհանելու, հասկանալու և վերլուծելու կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- կառավարման տեսության մարդկային հարաբերությունների և վարքաբանական գիտությունների դպրոցի դերը կառավարման ոլորտում,
- դիմագիտությունը որպես անձանոթների մասին արագ տեղեկության ստացման մեխանիզմ,
- տոլերանտության բնութագրիչները,
- ընկալման և ընբռնման մեխանիզմները միջանձնային հաղորդակցման ընթացքում՝ իդենտիֆիկացիա, էմպաթիա, ռեֆլեքսիա,

- միջանձնային հաղորդակցության տեսակներն ու դրանց գործառույթները՝ պերցեպտիվ, ինտերակտիվ, կոմունիկացիոն,
- դատողությունների վրա հիմնված որոշումների ընդունման եղանակները և այլընտրանքային տարբերակների գնահատումը կառավարչական որոշումների ընդունման գործընթացում,
- խոսքային /վերբալ/ հաղորդակցման և լսելու ունակության առանձնահատկությունները,
- բարոյական սկզբունքների և բարոյական պահվածքի դերն ու նշանակությունը՝ կառավարման գործընթացն իրականացնելիս,
- գործարար հաղորդակցության դերը բիզնեսի կազմակերպման և զարգացման գործում,
- ծառայությունների տեսակները և քաղաքացիներին ծառայություն մատուցող հաստատություններին ներկայացվող պահանջները,
- բանկի հաճախորդի համար ստեղծել երկխոսության հաստատման, կողմնորոշման, հարցի, խնդրի քննարկման, որոշման ընդունման համար պայմաններ,
- բանկային ռիսկերի դասակարգման սկզբունքները և վարկային ռիսկի էությունը,
- բանկի հաճախորդի համար ձևավորել նորմալ և ջերմ հաղորդակցան մթնոլորտ
- բանակցությունների տեսակները,սկզբունքային և փուլային կառուցվածքը
- բանակցություններին նախապատրաստման միջոցառումները:

Կկարողանա՝

- կատարել կառավարման վարչական և մարդկային հարաբերությունների դպրոցների համեմատական վերլուծություն,
- մեկնաբանել մարմնի արտահայտչական շարժումներ /կինեսիկա/, տակեսիկան ու պրոկսեմիկան ներկայացնել որպես հաղորդակցման միջոցներ,
- վերլուծական ընդունակությունները կիրառել որպես փոխադարձ ընկալման միջոց,
- վերլուծել հույգերի արտահայտման պրոցեսը և գնահատել գրավչության գործոնի առկայությունն ընկալման ընթացքում,
- մեկնաբանել կազուալ ատրիբուցիայի էությունը՝ անհատական, իրավիճակային և խթանային,
- ներկայացնել տրանսակցիոն վերլուծության էությունը՝ ըստ Է.Բերնի և վերլուծել հաղորդակցման ընկալման մոդելն ըստ Շուլց Ֆոն Տունի,
- Ներկայացնել հաղորդակցման ժամանակ խոսքային տեղեկության կորուստների պատճառներն ըստ Պ. Միցիչի,
- հիմնավորել անձի կողմից գործարար էթիկետի պահպանման կարևորությունը,

- ներկայացնել հաղորդակցման խոչընդոտները գործարար հաղորդակցման ոլորտում,
- ներկայացնել ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները, ծառայությունների դասակարգման չափանիշները,
- վերլուծել քաղաքացիներին ծառայությունների մատուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները,
- ներկայացնել քաղաքացիների հետ հաղորդակցվելու և դիմումները բավարարելու համար անհրաժեշտ մոտեցումները,
- ներկայացնել և վերլուծել վարկային ռիսկի կառավարման առանձնահատկություններն առևտրային բանկերում,
- կազմակերպել բանկի աշխատակցի կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ հաճախորդին պրոֆեսիոնալ ու բարեհաճորեն տեղեկություն հաղորդելու, խորհրդատվություն մատուցելու գործընթացը,
- վարպետություն դրսևորել բանկային հաղորդակցման ոլորտում բողոքները կառավարելիս,
- մշակել բանակցությունների ռազմավարությունը և վերլուծել բանակցությունների արդյունքները:

Կտիրապետի՝

- անձի հաղորդունակության հմտություններին,
- տեղեկատվության փոխանակման և տարածման կապուղիներին,
- լսելու ունակությունների զարգացման մոտեցումներին և ոչ խոսքային հաղորդակցման միջոցներին,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, գործնական նամակագրության կանոններին,
- խոսքային հաղորդակցման գործընթացում փակ, հայելային և տեղեկություն ակնկալող հարցումները տալու մոտեցումներին,
- ղեկավարի առաջնորդման ոճի նորարարական- վերլուծական, նորարարական- ներընմբռնողական, պահպանողական- վերլուծական, պահպանողական – ներընմբռնողական ձևերին,
- ղեկավարի չորս հիմնական դերերի առանձնահատկություններին՝ ըստ Հ . Մինցբերգի,
- ծառայությունների ոլորտի զարգացման ուղիներին և կառուցակարգերին,

- քաղաքացիներին ծառայությունների մատուցման գործընթացի կազմակերպման հիմունքներին,
- բանկային ռիսկերի գնահատման մեթոդներին և կառավարման սկզբունքներին,
- առկա և հավանական հաճախորդների հետ հաղորդակցման
- նախապատրաստման, երկխոսության վարման հմտություններին,
- կոնֆլիկտային իրավիճակներում հաճախորդի հետ շփվելու կանոններին,
- անձի բանակցություններ վարելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մարդկային հարաբերությունների դպրոցի դերը կառավարման տեսության զարգացման գործում: **Թեմա 2.** «Գործարար հաղորդակցում» դասընթացի առարկան: Հաղորդակցման ունակությունների դերը կազմակերպության իմիջի ձևավորման գործում: **Թեմա 3.** Հաղորդակցումը որպես տեղեկատվական գործընթաց: **Թեմա 4.** Հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում: **Թեմա 5.** Հաղորդակցումը որպես փոխազդեցություն: **Թեմա 6.** Խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները: **Թեմա 7.** Գործնական հաղորդակցման բարոյական սկզբունքները և նորմերը: Գործնական հաղորդակցման էթիկետ: **Թեմա 8.** Գործարար հաղորդակցության դերը բիզնեսի կազմակերպման և զարգացման գործում: **Թեմա 9.** Ծառայությունների էությունը և դրանց դասակարգումը: Ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Քաղաքացիներին ծառայությունների մատուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները: **Թեմա 11.** Բանկային գործակալի հաղորդակցման ունակությունները և հմտությունները: **Թեմա 12.** Բանակցությունների էությունը և տեսակները: Բանակցությունների ռազմավարությունը և արդյունքների վերլուծությունը:

<u>14/Մ11 Ֆինանսական վերլուծություն</u> (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

մագիստրանտների մոտ ձևավորել ֆինանսական վերլուծության ժամանակակից մեթոդների օգտագործման և գործառույթների իրականացման տեսական գիտելիքներ և գործնական

հմտություններ՝ որպես շուկայական միջավայրում կառավարչական որոշումների ընդունման գործիք, ուսումնասիրել ձեռնարկության ֆինանսական դրության կանխատեսման և ախտորոշման մեթոդները,ձեռնարկության ֆինանսական կայունության վերլուծության ժամանակակից մեթոդները,ձեռնարկության գործարար ակտիվության գնահատման ժամանակակից մեթոդները, ինչես նաև կարողանալ գնահատել և վերլուծել կանաչ ռիսկերը և կիրառել Կանաչ ֆինանսական գործակիցներ (Green Financial Ratios):

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Ժամանակակից ֆինանսական վերլուծության գործառույթները, նպատակները և խնդիրները,
2. ֆինանսական վերլուծության հիմնական մեթոդները, գործիքները և տեսակները,
3. ձեռնարկության ֆինանսական դրության կանխատեսման և ախտորոշման մեթոդները,
4. ձեռնարկության ֆինանսական կայունության վերլուծության ժամանակակից մեթոդները,
5. ձեռնարկության գործարար ակտիվության գնահատման ժամանակակից մեթոդները:

Կկարողանա՝

1. օգտագործել տեղեկատվության անալիտիկ աղյուրները,
2. կազմել վերլուծական աղյուսակներ, գրաֆիկներ վերլուծության տարբեր փուլերի համար,
3. վերլուծել և գնահատել ձեռնարկության ֆինանսական դրությունը,
4. կանխատեսել ձեռնարկության ֆինանսական արդյունքները,
5. գնահատել ձեռնարկության գործարար ակտիվության մակարդակը,
6. գնահատել ձեռնարկության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և ներկայացնել ֆինանսական դրությունը բարելավելու օպտիմալ տարբերակներ:

Կտիրապետի՝

1. Ֆինանսական վերլուծության ժամանակակից մեթոդներին և գործիքներին,
2. ֆինանսական վերլուծության արդյունքում տնտեսվարող սուբյեկտների առաջ կանգնող պրակտիկ խնդիրների լուծման մեթոդներին,
3. ձեռնարկությունը առանձին տեսակի ռեսուրսներով ապահովվածությունը բնութագրող ցուցանիշների գնահատման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ժամանակակից ֆինանսական վերլուծության էությունը, նպատակները և խնդիրները: **Թեմա 2.** Ֆինանսական վերլուծության տեղեկատվական աղբյուրները: **Թեմա 3.** Ֆինանսական վերլուծության մեթոդները և գործիքները: **Թեմա 4.** Ֆինանսական վերլուծության ցուցանիշների համակարգը: **Թեմա 5.** Կազմակերպության ֆինանսական դրության կանխատեսման մեթոդները: **Թեմա 6.** Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության ժամանակակից մեթոդները: **Թեմա 7.** Կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության ժամանակակից մեթոդները: **Թեմա 8.** Կազմակերպության ֆինանսական արդյունքների վերլուծության ժամանակակից մեթոդները: **Թեմա 9.** Գործարար ակտիվության վերլուծության ժամանակակից մեթոդները: **Թեմա 10.** Կայունության հաշվետվություն և դրա ազդեցությունը ֆինանսական վերլուծության վրա: **Թեմա 11.** Կանաչ ռիսկերի գնահատում ֆինանսական վերլուծության մեջ: **Թեմա 12.** Կանաչ ֆինանսական գործակիցներ (Green Financial Ratios): **Թեմա 13.** Կայունության վրա հիմնված շահութաբերության և ծախսերի վերլուծություն:

12/Մ9 Կորպորատիվ ֆինանսական կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսումնասիրել կորպորատիվ հարաբերությունների հիմքում ընկած խնդիրները, կորպորատիվ կառավարման բարձրագույն մակարդակին վերաբերվող գործառույթները, բաժնետերերի շահերը պաշտպանելու սկզբունքները և կանոնները, կորպորացիայի զարգացման ֆինանսական կանխատեսումը, ֆինանսական որոշումների ռիսկերը, շահութաբերությունը եւ արդյունավետությունը, այդ թվում՝ երկարաժամկետ ֆինանսավորման ռազմավարական որոշումները: Ծանոթանալ Կանաչ պարտատոմսերին և կայուն ֆինանսավորման գործիքներին, կարողանալ կազմել Կորպորատիվ կայունության հաշվետվություններ (ESGReporting)

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

- Ներկայացնել ժամանակակից ընկերության կորպորատիվ կառավարման սկզբունքները, մոդելները:
- Նկարագրել բաժնետերերի իրավունքները և պարտականությունները
- Բացատրել կորպորատիվ ֆինանսների հիմնական հասկացությունները՝ կապիտալի կառուցվածք, ֆինանսավորման աղբյուրներ, ռիսկ–շահույթ հարաբերակցություն:
- Նկարագրել ESG (Environmental, Social, Governance) սկզբունքները և դրանց դերակատարությունը ժամանակակից ֆինանսական համակարգում:
- վերլուծել ֆինանսական հաշվետվությունները եւ կազմել կորպորացիայի զարգացման ֆինանսական կանխատեսումը
- Հասկանալ կանաչ տնտեսության հիմքերը, կայուն զարգացման նպատակները (SDGs) և դրանց ֆինանսական ազդեցությունը:
- Բացատրել «կանաչ» ֆինանսավորման գործիքները՝ կանաչ պարտատոմսեր, կայունության պարտատոմսեր, սոցիալական ներդրումներ, ազդեցության ներդրումներ (Impact Investing):
- Բացատրել կորպորատիվ կառավարման միջազգային չափանիշները և դրանց կապը ընկերության կայունության ու ֆինանսական արդյունավետության հետ:

կարողություն

- Հիմնավորված որոշումներ ընդունել բիզնեսի ֆինանսական զարգացման ռազմավարությունների մշակման գործում:
- Գնահատել ֆինանսական ռիսկերը՝ ներառելով կլիմայական, բնապահպանական և սոցիալ-տնտեսական գործոնները:
- Կիրառել միջազգային չափանիշներ (TCFD, GRI, EU Taxonomy, ISO Sustainability Standards) կորպորատիվ հաշվետվությունների վերլուծության մեջ:
- Աջակցել ընկերության կառավարման մարմիններին՝ կայուն և պատասխանատու ֆինանսական քաղաքականության մշակման հարցում:
- Նախաձեռնել և մշակել երկարաժամկետ կայունության ռազմավարություններ ընկերությունում:

հմտություն

- Վերլուծել ընկերության ֆինանսական ցուցանիշները՝ հաշվի առնելով բնապահպանական և սոցիալական ռիսկերը:
- Գնահատել ընկերության համար առավել արդյունավետ ֆինանսավորման ռազմավարությունը՝ ներառելով տատանվող ESG-ռիսկեր:
- Վերլուծել կանաչ պարտավորություններն ու ֆինանսական գործիքները՝ դրանց ռիսկերն ու օգուտները:
- Վերլուծել կորպորատիվ կառավարման կառուցվածքը և առաջարկել բարելավման մեխանիզմներ՝ կենտրոնանալով թափանցիկության, հաշվետվության և կայունության վրա:
- Իրականացնել ֆինանսական որոշումներ, որոնք համատեղում են կարճաժամկետ արդյունավետությունը և երկարաժամկետ կայուն զարգացումը:
- Գնահատել շահութաբաժնային քաղաքականությունը, շրջանառու կապիտալի եւ կարճաժամկետ վարկի կառավարման քաղաքականության նախապատրաստումը և իրականացումը
- Տիրապետել տնտեսական տեղեկատվության ֆինանսական վերլուծության հիմնական հմտություններին, կարճաժամկետ եւ երկարաժամկետ ֆինանսական որոշումների նախապատրաստմանը եւ ընդունմանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Կորպորատիվ ֆինանսների ներածություն: **Թեմա 2.** Կորպորատիվ կառավարման միջազգային համակարգեր: **Թեմա 3.** Կազմակերպության ֆինանսական քաղաքականություն **Թեմա 4.** Կորպորատիվ ռիսկերի կառավարում: **Թեմա 5.** Կորպորատիվ ակտիվների կառավարում: **Թեմա 6.** Ընկերության արժեքի կառավարում **Թեմա 7.** Բաժնետոմսերի գնահատման հիմունքներ: Կորպորացիայի շահաբաժինների քաղաքականությունը:

Թեմա 8. Կանաչ տնտեսություն, ESG և կայուն ֆինանսավորում: **Թեմա 9.** Կանաչ տնտեսության միջազգային փորձ և արդի միտումներ: **ԹԵՄԱ 10.** Ռազմավարական որոշումների ֆինանսական հիմնավորումը հայկական կորպորացիաներում:

12/Մ17 Ֆինանսավարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (34 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Սույն դասընթացը ուսանողին հնարավորություն կտա խորապես ուսումնասիրել ֆինանսավարկային համակարգի զարգացման միտումները, վարկային կապիտալի շուկայի առանձնահատկությունները և միտումները, ֆինանսավարկային համակարգի զարգացման և կայացման տեսլականները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

1. Ներկայացնել ֆինանսավարկային հարաբերությունների կառավարման տեսական հիմունքները
2. Սահմանել ֆինանսավարկային հարաբերությունների կարգավորման և կառավարման մեթոդները
3. Բնութագրել ֆինանսավարկային հարաբերությունների կառավարման ժամանակակից գործիքները

կարողություն

1. վերլուծել ֆինանսավարկային համակարգի ժամանակակից միտումները
2. վերլուծել, կանխատեսել և պլանավորել վարկերի տեսակները
3. պլանավորել առևտրային բանկի ֆինանսավարկային հարաբերությունները
4. կառավարել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսավարկային հարաբերությունները
5. գնահատել վարկային պորտֆելի կառուցվածքը և ռիսկայնությունը:

հմտություն

1. Տիրապետել վարկային կապիտալի ձևավորման և շուկայի կարգավորման մեխանիզմներին
2. Լուսաբանել ֆինանսավարկային հարաբերությունների առանձնահատկությունները
3. Հիմնավորել բյուջետային հավասարակշռության, պակասուրդի անհրաժեշտությունը՝ կախված տնտեսական իրավիճակից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ֆինանսավարկային հարաբերությունների կառավարման տեսական հիմունքները: **Թեմա 2.** ՀՀ ֆինանսավարկային ֆինանսավարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ առկա հիմնախնդիրները: **Թեմա 3.** Վարկային կապիտալի շուկայի զարգացման առանձնահատկությունները և հիմնահարցերը ՀՀ-ում: **Թեմա 4.** Բանկերի և վարկային կազմակերպությունների զարգացման առանձնահատկություններն ու հիմնահարցերը ՀՀ-ում:

12/Մ2 Բանկային մենեջմենթ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսումնասիրել բանկային համակարգը, առևտրային բանկերի գործունեությունը, առևտրային բանկերի կառուցվածքը և կառավարումը, բանկային օրենքները և դրանց կիրառումը ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. բանկային գործունեության ՀՀ օրենքները,
2. «Բանկային մենեջմենթ›› առարկայի էությունը,
3. մենեջմենթի հիմնական գործառույթները:

Կկարողանա՝

1. վերլուծել առևտրային բանկերի գործունեության առանձնահատկությունները,
2. անձնակազմի, նրա կառավարման առանձնահատկությունները,
3. իրականացնել առևտրային բանկի տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն:

Կտիրապետի՝

1. ժամանակակից բանկային համակարգի կառավարման ձևերին արդի շուկայական տնտեսության պայմաններում,
2. իրավիճակային խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. ՀՀ Բանկային օրենքներ: **Թեմա 2.** «Բանկային մենեջմենթ» առարկայի էությունը: **Թեմա 3.** Մենեջմենթի հիմնական գործառույթները: **Թեմա 4.** Անձնակազմի կառուցվածք, նրա կառավարումը: **Թեմա 5.** Ֆինանսների կառավարում: **Թեմա 6.** Բանկային ռիսկ: **Թեմա 7.** Ժամանակակից բանկային ծառայությունները շուկայական տնտեսության պայմաններում:

12/Մ10 ՀՀ հարկային քաղաքականության հիմնախնդիրներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը՝

Յուրաքանչյուր պետության ու հասարակության մշտական ուշադրության տակ գտնվող հիմնահարցերից են պետության հարկային գործունեության առանձնահատկությունները, հարկային օրենսդրության բարեփոխումները, հարկային համակարգի ձևավորումն ու իրավական կարգավորումը, հարկային քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Սույն դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալ տնտեսությանի ու դրանց ձևավորման առանձնահատկությունների և հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության արդյունավետության բարձրավման հիմնահարցերի շուրջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

- հարկային քաղաքականության իրականացման ձևերը և տեսակները,
- հարկային գործող օրենսդրության առանձնահատկությունները,

- հարկային վերահսկողություն և հարկային հսկողություն հասկացությունները և դրանց իրավական բովանդակությունը,
- հարկ վճարողների իրավունքներն ու պարտականությունները,
- հարկերի տեսակները և դրանց կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում:

կարողություն

- բնութագրել հարկային համակարգի կառուցակարգը,
- քննարկել և լուսաբանել հարկային քաղաքականության սուբյեկտներին,
- բացահայտել հարկային քաղաքականության առանձնահատկությունները նպատակները և խնդիրները,
- ներկայացնել հարկային համակարգի կազմակերպչական սկզբունքները,
- ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ հարկերը և վերլուծել դրանց դրսևորման առանձնահատկությունները,
- գնահատել հարկերի՝ որպես տնտեսության կարգավորման կարևոր լծակի, դերն ու նշանակությունը,
- գնահատել հարկերի դերը ՀՀ բյուջետային եկամուտների ձևավորման գործում,
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները,
- գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը ուղղակի և անուղղակի հարկերի մասով,
- վերլուծել հարկային քաղաքկանության դերը տնտեսության պետական կարգավորման համակարգում,
- վերլուծել արդյունավետ հարկային բեռի սահմանման ուղիները:

հմտություն

- հարկերի հաշվարկման մեթոդաբանությանը,
- հարկային քաղաքականության ձևերին և ուղղություններին,
- հարկային հսկողության իրականացման ձևերին,
- հարկային բեռի հաշվարկման մեթոդաբանությանը,
- ստուգումների անցկացման ընթացակարգին,

- ՀՀ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության առանձնահատկություններին,
- հարկերի՝ որպես տնտեսության կարգավորման կարևոր լծակի, դերին ու նշանակությանը,
- հարկագանձման արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման ու կիրառման տեսական և մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 2.** Հարկերի տեսակները և կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 3.** Հարկային քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 4.** Հարկային հարաբերությունների կատարելագործման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 5.** Հարկային վարչարարությունը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 6. Հ**արկային ներուժի գնահատումը և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում: **Թեմա 7.** Պատասխանատվություն հարկային օրենսդրությունը խախտելու համար:

12/Մ7 Ծրագրային բյուջետավորում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Տեղեկություններ տրամադրել ծրագրային բյուջետավորում հասկացության և ՀՀ տարբեր մակարդակների բյուջեներում այն կիրառելու նպատակահարմարության ու հնարավորությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է՝

Գիտենա բյուջետավորման հիմնական մեթոդները, ծրագրային բյուջետավորման հիմնական առանձնահատկությունները և ՀՀ բյուջետային համակարգում այն կիրառելու ուղղությամբ կատարված ու կատարվելիք աշխատանքների մասին,

Կարողանա ուսումնասիրել բյուջեների կազմման հիմքում դրվող զարգացման ծրագրերը և ընդհանուր գծերով գնահատել դրանց համապատասխանությունը ծրագրային բյուջետավորման չափանիշներին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել այդ ծրագրերը բարելավելու և ծրագրային բյուջետավորման պահանջներին մոտեցնելու ուղղությամբ,

Տիրապետի ՀՀ բյուջետային համակարգում բյուջեների պլանավորման ընթացքում կիրառվող մոտեցումներին, պետական բյուջեի կազմման հիքում դրվող միջնաժամկետ ծախսերի ծրագրի ընդհանուր բովանդակությանը և ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ ՀՀ-ում կատարված ու կատարվելիք աշխատանքներին վերաբերվող տեղեկատվությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ծրագրային բյուջետավորման էությունը, նպատակներն ու հիմնարար սկզբունքները: **Թեմա 2.** Բյուջետային գործընթացի զարգացման փուլերը և ծրագրային մոտեցման ձևավորումը: **Թեմա 3.** Ռազմավարական պլանավորման և բյուջետավորման փոխկապակցվածությունը: **Թեմա 4.** Ծրագրային բյուջեի կառուցվածքը և բաղադրիչները: **Թեմա 5.** Ռազմավարական փաստաթղթերի դասակարգումը պետական պլանավորման համակարգում: **Թեմա 6.** Ռազմավարական նպատակների և արդյունքների հիերարխիա: **Թեմա 7.** Արդյունքային ցուցանիշների ձևավորման և չափման մեթոդաբանություն: **Թեմա 8.** Ծրագրային բյուջետավորման պահանջները ոլորտային ռազմավարությունների նկատմամբ: **Թեմա 9.** Ծախսերի գնահատման և ֆինանսավորման առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանություն: **Թեմա 10.** Ծրագրերի արդյունավետության գնահատման սկզբունքներ և գործիքներ: **Թեմա 11.** Հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ծրագրային բյուջետավորման համակարգում: **Թեմա 12.** Ծրագրային բյուջետավորման իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը ՀՀ-ում: **Թեմա 13.** Պետական մարմինների ծրագրերի ռազմավարությունների մշակման կարգը և պատասխանատվությունը: **Թեմա 14.** Տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրային բյուջետավորման առանձնահատկությունները: **Թեմա 15.** Ծրագրային բյուջետավորման միջազգային փորձը և համեմատական վերլուծությունը: **Թեմա 16.** Ռազմավարական նպատակների և արդյունքների շղթայի կառուցման վարժանք: **Թեմա 17.** Ծրագրային բյուջեի օրինակների վերլուծություն ՀՀ պետական բյուջեում: **Թեմա 18.**Ծրագրի արդյունքային ցուցանիշների համակարգի մշակում: **Թեմա 19.**Ծախսերի գնահատման և

ֆինանսավորման առաջնահերթությունների վարժանք: **Թեմա 20.**Ծրագրային բյուջեի նախագծման և ներկայացման խմբային աշխատանք

14/Մ2 Բանկային աուդիտ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել բանկային համակարգը, առևտրային բանկերի գործունեությունը, գործունեության կառուցվածքը և կառավարումը, բանկային օրենքները և դրանց կիրառումը ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում:

1. գիտենա բանկային գործունեության ՀՀ օրենքները, «Բանկային աուդիտ» առարկայի էությունը:
2. կարողանա վերլուծել առևտրային բանկերի գործունեությունը, իրականացնել առևտրային բանկի տնտեսական գործունեության, ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն:
3. տիրապետի ժամանակակից բանկային համակարգի կառավարման ձևերին արդի շուկայական տնտեսության պայմաններում, ֆինանսական արդյունքների վերլուծության և հնարավոր խնդիրների բացահայտմանը:

Բովանդակություն

Թեմա 1 .ՀՀ Բանկային օրենքներ: **Թեմա 2**. Բանկային աուդիտ: **Թեմա 3.** «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք: **Թեմա 4.** Աուդիտոր, աուդիտ իրականացնող անձ և աուդիտի ենթարկվող անձ: **Թեմա 5.** Վարկային գործառնություններ, վարկավորան գործընթաց

Թեմա 6. Բանկային ռիսկ, ռիսկի տարատեսակները: **Թեմա 7.** Ժամանակակից բանկային ծառայությունները շուկայական տնտեսության պայմաններում:

<u>12/Մ4 Դրամավարկային քաղաքականության հիմունքներ</u> (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

դրամավարկային քաղաքականության էության, նպատակների, կարգավորման և ազդեցության ոլորտների, քաղաքականության մեկնաբանման համաշխարհային տեսության ու փորձի, ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման օրենսդրական կարգավորման, դրամավարկային քաղաքականության արդի ուղղությունների և հեռանկարների հետ ծանոթացումը:

Դասընթացի թեմաները և դրանց բովանդակությունը կազմելիս հաշվի է առնվել դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակակից առանձնահատկությունները և այլ դասընթացների շրջանակում սույն դասընթացի թեմաների ուսումնասիրության մակարդակն ու խորության աստիճանը:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա

1. «Կենտրոնական բանկ» ֆինանսական ինստիտուտի նկարագիրը, օրենքով նշված հիմնական խնդիրները և գործառույթները,
2. դրամավարկային քաղաքականության էությունը, դրա գործառույթները և հիմնական ձևերը,
3. դրամավարկային քաղաքականության գործիքակազմը և հստակեցնել դրանց դերն ու նշանակությունը մակրոտնտեսական կայունունացման գործընթացում,
4. «Գնաճ» և «Գների կայունություն» հասկացությունները և գնաճային ճնշումների աղբյուրները,
5. գների վրա ազդող հիմնական մեխանիզմները, փոխանցման շղթաները և գործող դրամավարկային ռազմավարությունները:

Կկարողանա՝

1. կողմնորոշվել, գիտականորեն արտահայտվել դրամավարկային ժամանակակից ֆինանսատնտեսական քննարկումներում,
2. վերլուծել, մեկնաբանել, առանձնացնել դրամավարկային քաղաքականության գործիքակազմը և ընտրել առավել օպտիմալ տարբերակները,
3. մեկնաբանել, բնութագրել “Կենտրոնական բանկ” ֆինանսական ինստիտուտի գործունեությունը,
4. պարզաբանել Կենտրոնական բանկի ռազմավարությունները և տալ դրան արդյունավետության գնահատականը,

5. մեկնաբանել, վերլուծել Կենտրոնական բանկի տնտեսական նորմատիվները,

ներկայացնել դրամավարկային քաղաքականության միջազգային առաջավոր փորձը,

Կտիրապետի՝

1. Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային գործիքների կիրառման նպատակներին,
2. ԿԲ կողմից առաջադրվող ֆինանսական մեխանիզմներին,
3. ԿԲ մասին ՀՀ օրենքին և դրա դրույթներին,
4. ԿԲ հիմնական մեխանիզմներին և դրա օգտագործման ոլորտներին,
5. տնտեսական հաշվարկներ կատարելու մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կենտրոնական բանկի դերն ու նշանակությունը տնտեսական զարգացման գործընթացում: **Թեմա 2.** Դրամավարկային քաղաքականության էությունը:**Թեմա 3.** Դրամավարկային քաղաքականության մշակում և իրականացում: **Թեմա 4.** Դրամավարկային քաղաքականության գործիքներ: **Թեմա 5.** ՀՀ Դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը: Գնաճի նպատակադրում: **Թեմա 6.** Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում:

12/Մ8 Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր (2 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել կորպորատիվ տեղեկատվական համակարգերի ժամանակակից մեթոդներն ու առանձնահատկությունները, դրանց կիրառման առավելություններն ու թերությունները, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կիրառման փորձը տեղական և ինքնակառավարման մարմիններում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Գիտելիքներ էլեկտրոնային փաստաթղթերի, դրանց ֆունկցիաների, առավելությունների և շարժի վերաբերյալ:

2. Հիմնարար գիտելիքներ հաշվողական համակարգերում և ցանցային միջավայրերում տեղեկատվության հաղորդման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ:
3. Գիտելիքների տեղեկատվական համակարգերի միջոցով կառավարչական որոշումների կայացման վերաբերյալ:

Կկարողանա՝

1. Կարողանալ օգտվել գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերից և առաջարկել դրանց արդյունավետության բարձրացման նոր, ծրագրային և ապարատային լուծումներ:
2. Տեղեկատվության պահպանման և արտահոսքի վերահսկման ունակություն
3. Կարողանալ լուծել խնդիրներ, որոնք վերաբերում են կազմակերպության տարբեր ստորաբաժանումներիաշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Կտիրապետի՝

1. Ունենալ հմտություններ կառավարելու տեխնոլոգիական զարգացման գործընթացները:
2. ՈՒնենալ հմտություններ մշակելու տեղեկատվության շրջանառության լոգիստիկ համակարգեր,
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի կիրառմամբ կառավարչական որոշումեր մշակելու և իրականացնելու հմտություններ:

Բովանդակություն

Թեմա 1. Կորպորատիվ տեղեկատվական համակարգի տեսական նկարագիրը: **Թեմա 2.** Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի էությունն ու դերն էլեկտրոնային կառավարման հայեցակարգում: **Թեմա 3**. Փաստաթղթի ձևավորման և կազմման հիմնական պահանջները: **Թեմա 4.** Էլեկտրոնային փաստաթղթերի աշխատանքի կազմակերպումը: **Թեմա 5.** Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդման հիմքերը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

12/Մ28 Կանաչ տնտեսության հիմունքների ներածություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

զարգացնել ուսանողների հմտությունները՝ կանաչ տնտեսության և կայուն զարգացման սկզբունքները կիրառելու տարբեր տնտեսական ոլորտներում, ինչպես նաև առօրյա կյանքում իրենց ապագա մասնագիտական կարիերայի համար կոնկրետ իրավիճակների վերլուծության մեջ:

«Կանաչ տնտեսության հիմունքների ներածություն»-ը շրջակա միջավայրի պահպանությանը միտված բնատնտեսագիտական, սոցիալական բնույթի գիտություն է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

1. Կայուն զարգացում և կանաչ տնտեսություն հասկացությունները, նշանակությունը և կանաչ տնտեսության տեսակները
2. Կանաչ տնտեսության անցման դրդապատճառները և օգուտները
3. Կանաչ տնտեսության սկզբունքները
4. Կայուն զարգացման և կանաչ տնտեսության տեսության ուսումնասիրման առարկան, մեթոդները, գործառույթները
5. Կանաչ տնտեսության կապը մյուս հասարակական գիտությունների և պրակտիկայի հետ
6. Կանաչ տնտեսության անցման լավագույն հասանելի մեթոդները
7. Կանաչ տնտեսության գնահատման մեթոդները
8. Տնտեսության կանաչեցման ձևավորման նախադրյալները
9. Կանաչ ֆինանսավորման համակարգի կառուցվածքը և իրականացման եղանակները
10. Կանաչ տնտեսության (ըստ ուղղությունների) բիզնես ծրագրերի կազման մեթոդները
11. Էկոլոգիական քաղաքականության էությունը, տեսակները և նպատակները
12. Ներկայացնել ազգային ռազմավարության և կանաչ տնտեսության առաջխաղացման պլանավորման օրինակներ

կարողություն

1. Հաշվարկել կանաչ տնտեսության անցման օգուտները
2. Կիրառել կանաչ տնտեսության սկզբունքները

3. Կիրառել կանաչ տնտեսության անցման լավագույն հասանելի մեթոդները
4. Գնահատել կանաչ տնտեսության նախագծերը
5. Կանաչ ֆինանսավորման համակարգի կառուցվածք և իրականացման եղանակները
6. Կազմել կանաչ տնտեսության (ըստ ուղղությունների) բիզնես ծրագրեր
7. Մշակել կազմակերպությունների էկոլոգիական քաղաքականությունը
8. Կազմել ազգային ռազմավարության և կանաչ տնտեսության առաջխաղացման պլանավորման օրինակներ

հմտություն

1. Կայուն զարգացման ինդիկատորների համակարգին
2. Կանաչ տնտեսության սկզբունքներին
3. Կանաչ տնտեսության տեսակներին
4. Կանաչ տնտեսության գնահատման մեթոդներին
5. Կանաչ տնտեսության ոլորտային առանձնահատկություններին
6. Կանաչ տնտեսության բնութագրիչներին
7. Էկոլոգիական հետքի հաշվարկներին
8. Կանաչ նախագծերի կազման առանձնահատկություններին

Բովանդակությունը.

Թեմա 1. «Կանաչ տնտեսություն» դասընթացի առարկան և մեթոդը: **Թեմա 2.** «Կանաչ տնտեսության» անցման անհրաժեշտությունը, սկզբունքները և աջակցությունը: **Թեմա 3.** «Կանաչ տնտեսության» գնահատման գործընթացները և ցուցանիշները: **Թեմա 4.** «Կանաչ տնտեսության» անցման ֆինանսավորումը: **Թեմա 5.** «Կանաչ էներգետիկան» որպես կայուն տնտեսական զարգացման գործոն: **Թեմա 6.** «Կանաչ տնտեսության» վրա հիմնված գյուղատնտեսության կայուն զարգացում: **Թեմա 7.** Շրջակա միջավայրի քաղաքականությունը և դրա իրականացման տնտեսական մեխանիզմը: **Թեմա 8.** «Կանաչ աճի» մոդելները տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) երկրներում: **Թեմա 9**. «Կանաչ տնտեսության» անցման փորձը զարգացող երկրներում:

12/Մ29 Կանաչ ձեռնարկությունների տեսակների ներածություն՝ միկրոձեռնարկություն, փոքր բիզնես, սոցիալական ձեռնարկություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ծանոթացնել կանաչ տնտեսության շրջանակում գործող ձեռնարկությունների հիմնական տեսակներին՝ միկրոձեռնարկություններին, փոքր բիզնեսին և սոցիալական ձեռնարկություններին, բացահայտել դրանց էությունը, առանձնահատկությունները, կառավարման և ֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև դրանց դերը կայուն զարգացման, շրջակա միջավայրի պահպանության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

- բացատրել կանաչ ձեռնարկատիրության էությունը և նշանակությունը կանաչ տնտեսության համակարգում,
- բնութագրել միկրոձեռնարկությունների, փոքր բիզնեսների և սոցիալական ձեռնարկությունների տեսակները,
- ներկայացնել կանաչ ձեռնարկությունների իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ հիմքերը,
- ճանաչել կանաչ բիզնեսի ֆինանսավորման և աջակցության հիմնական աղբյուրները,
- հասկանալ սոցիալական ձեռնարկությունների դերը կայուն զարգացման նպատակների (SDGs) իրականացման գործընթացում:

կարողություն

- համեմատել տարբեր տեսակի կանաչ ձեռնարկությունները ըստ չափի, նպատակների և գործունեության ոլորտների,
- վերլուծել կանաչ ձեռնարկությունների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունը,

- գնահատել փոքր և միկրո կանաչ բիզնեսների զարգացման հնարավորությունները տեղական մակարդակում,
- կիրառել կանաչ ձեռնարկատիրության հիմնական մոտեցումները բիզնես գաղափարների ձևավորման ժամանակ:

հմտություն

- մշակել պարզ կանաչ բիզնես գաղափար կամ նախաձեռնություն,
- ներկայացնել կանաչ ձեռնարկության սոցիալ-էկոլոգիական արժեքը,
- աշխատել թիմում՝ քննարկելով կայուն զարգացմանն ուղղված ձեռնարկատիրական լուծումներ,
- պատրաստել համառոտ վերլուծական զեկույց կամ ներկայացում կանաչ ձեռնարկության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կանաչ տնտեսություն և կանաչ ձեռնարկատիրություն: **Թեմա 2.** Միկրոձեռնարկություններ կանաչ տնտեսությունում: **Թեմա 3.** Փոքր բիզնեսը և կանաչ նորարարությունները: **Թեմա 4.** Սոցիալական ձեռնարկություն որպես կայուն զարգացման գործիք: **Թեմա 5.** Կանաչ ձեռնարկությունների ֆինանսավորում և աջակցություն: **Թեմա 6**. Կանաչ ձեռնարկությունների զարգացման հեռանկարներ:

12/Մ30 Կանաչ բիզնեսի պլանավորման և ներկայացման զարգացում (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին և սկսնակ ձեռնարկատերերին տրամադրել տեսական և գործնական գիտելիքներ կանաչ բիզնես գաղափարների ձևավորման, պլանավորման, ֆինանսական հիմնավորման և արդյունավետ ներկայացման ուղղությամբ՝ ընդգծելով բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունության սկզբունքների ինտեգրումը բիզնես պլանավորման գործընթացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն)

գիտելիք

- բացատրել կանաչ բիզնեսի պլանավորման էությունը և փուլերը,
- ներկայացնել կանաչ բիզնես մոդելների հիմնական տեսակները,
- հասկանալ ֆինանսական պլանավորման և կանխատեսումների դերը կանաչ բիզնեսում,
- ճանաչել ներդրողների և դոնորների պահանջները կանաչ նախագծերի նկատմամբ,
- իմանալ կայուն զարգացման ցուցանիշների և ազդեցության չափման մեթոդները:

կարողություն

- ձևակերպել կանաչ բիզնես գաղափար և ռազմավարական նպատակներ,
- կազմել կառուցվածքային և հիմնավորված կանաչ բիզնես պլան,
- իրականացնել շուկայի և մրցակցային միջավայրի վերլուծություն,
- մշակել ֆինանսական հաշվարկներ (եկամուտներ, ծախսեր, շահութաբերություն),
- պատրաստել արդյունավետ բիզնես ներկայացում (pitch deck) տարբեր շահառուների համար:

հմտություն

- կիրառել բիզնես պլանավորման գործիքներ (Business Model Canvas, SWOT, PESTEL),
- ձևավորել տեսողական և բովանդակային գրագետ ներկայացումներ,
- հիմնավորել կանաչ բիզնեսի էկոլոգիական և սոցիալական ազդեցությունը,
- հանդես գալ հանրային ներկայացումներով և պաշտպանել բիզնես գաղափարը,
- աշխատել թիմում՝ մշակելով համատեղ կանաչ բիզնես նախագիծ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կանաչ բիզնեսի պլանավորման հիմունքներ: **Թեմա 2.** Կանաչ բիզնես գաղափարի ձևավորում : **Թեմա 3.** Բիզնես մոդելների մշակում: **Թեմա 4.** Շուկայի և մրցակցության վերլուծություն: **Թեմա 5.** Ֆինանսական պլանավորում կանաչ բիզնեսում: **Թեմա 6**. Կանաչ

բիզնեսի ազդեցության գնահատում: **Թեմա 7.** Կանաչ բիզնեսի ներկայացման (Pitching) տեխնիկաներ:

3. Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

<u>12/Մ6 Ծառայությունների բիզնեսի զարգացման արդի հիմնախնդիրները</u> (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (34 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ծառայության ոլորտի բիզնեսի կազմակերպման առանձնահատկություններին և հիմնախնդիրներին, համայնքներում դրա զարգացման և կայացման ձևերին: Զբոսաշրջությունը որպես գիտություն տալիս է անհրաժեշտ գիտելիքներ գործնական աշխատանքներում կիրառելու ուղղությամբ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա

- տարբերակել և ներկայացնել զբոսաշրջության ժամանակակից տեսակները,
- բացահայտել նոր առաջ եկող տեսակները,
- ճանաչել, տարբերակել պետության գործառութները զբոսաշրջության ոլորտում, փոքր համայնքներում դրա զարգացման հնարավորություններին,
- գիտականորեն ճանաչել զբոսաշրջության կարգավորման շուկայական և պետական մեխանիզմները,
- դասակարգել համաշխարհային զբոսաշրջության զարգացման

Կկարողանա՝

- կողմնորոշվել, արտահայտվել զբոսաշրջության ոլորտին վերաբերվող հարաբերությունների ժամանակակից տեսական քննարկումներում,
- վերլուծել, մեկնաբանել, առանձնացնել զբոսաշրջության զարգացման տենդենցը,
- մեկնաբանել, բնութագրել զբոսաշրջության պետական կարգավորման տարբերակները՝ պահելով շուկայական մրցակցությունը,

- վերհանել, պարզաբանել պետության կողմից զբոսաշրջության քաղաքականության էությունը, փոքր համայնքներում զարգացմանը խոչընդոտող խնդիրները,
- մեկնաբանել, պարզաբանել զբոսաշրջային օրենքի պահանջները,
- ներկայացնել, տարբերակել ազգային տնտեսության զարգացման գործում զբոսաշրջության կայուն զագացման ընթացքը՝ որպես փոքր համայնքների զարգացման հենակետ

Կտիրապետի՝

- Տիրապետի զբոսաշրջային ոլորտի համեմատական վերլուծությանը,
- պատկերավոր ներկայացնի փոքր համայնքներում զբոսաշրջության զարգացման տեսլականները,
- գործնականում կիրառել զբոսաշրջության տեսակները որպես տվյալ տարածքի կամ համայնքի զարգացման մեխանիզմ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Զբոսաշրջության տեսակները: **Թեմա 2.** ՀՀ-ում կիրառվող զբոսաշրջության տեսակները և դրանց առանձնահատկությունը: **Թեմա 3.** Զբոսաշրջության ծառայությունները: **Թեմա 4.** Զբոսաշրջության դերը տնտեսության ճյուղերի կառուցվածքում: **Թեմա 5.** Կայուն զբոսաշրջությունից առաջացող իրական տնտեսական արդյունքը: **Թեմա 6.** Համայնքներում զբոսաշրջության կայուն զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 7.** Զբոսաշրջության տնտեսական արդյունավետությունը: **Թեմա 8.** Տեղական ինքնակառավարման մարմինները և կայուն զբոսաշրջության կազմակերպումը. **Թեմա 9.** Զբոսաշրջության ոլորտում հաճախ հանդիպող խնդիրները: **Թեմա 10.** Զբոսաշրջային վիճակագրությունն ու այցելությունների քանակը: **Թեմա 11.** Զբոսաշրջության բնագավառում մենեջմենթի ֆունկցիաները և սկզբունքները: **Թեմա 12.** Զբոսաշրջային շուկայի վերլուծություն: **Թեմա 13.** Միջազգային զբոսաշրջության խթանման հիմնական փուլերը: **Թեմա 14.** Միջազգային զբոսաշրջային մուտքերը: **Թեմա 15.** Հիմնական և լրացուցիչ ծառայություններ: **Թեմա 16.** Զբոսաշրջային ոլորտի աշխատակիցների արտաքինին ներկայացվող պահանջները: **Թեմա 17.** Համազգեստի և արտահագուստի տարբերումները: **Թեմա 18.** Էթիկետի ու բարոյականության կիրառումը զբոսաշրջության ոլորտում: **Թեմա 19.** Զբոսաշրջային և հյուրանոցային նախապատմությունը:. **Թեմա 20.** Հյուրանոցների գնահատման կարգը: **Թեմա 21.** Որոշում հյուրանոցային կարգերի մասին:

14/Մ10 Ֆինանսական առողջացման մեխանիզմները կազմակերպություններում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (34 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

մագիստրանտներին ծանոթացնել կազմակերպության գործարար ակտիվության բարձրացման , ֆինանսական կայունության ապահովման արդի հիմնախնդիրներին, որոնց լուծումը հնարավորություն կընձեռնի կազմակերպություններին դիմակայելու սուր մրցակցությանը և պահպանել իրենց դիրքը շուկայում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա

տնտեսության մեջ տեղի ունեցող արմատական վերափոխումների էությունը, ֆինանսական առողջացման ընթացքում օգտագործվող մեթոդները, ֆինանսական առողջացման ծրագրի կառուցվածքը:

Կկարողանա՝

վերլուծել կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը: Գնահատել կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը նրա ֆինանսական դրության վրա: Վերլուծել կազմակերպության ֆինանսական դրությունը բնութագրող գործակիցների համակարգը: Ուսումնասիրել անվճարունակ կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության առանձնահատկությունները: Բացահայտել կազմակերպության ֆինանսական դրության առողջացման պահուստները:

Կտիրապետի՝

կազմակերպությունների ֆինանսական առողջացմանն ուղղված ժամանակակից մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կազմակերպությունների ֆինանսական կայունության հիմնախնդիրները արդի պայմաններում:**Թեմա 2.** Կազմակերպությունների ֆինանսական կայունության խնդիրները: **Թեմա 3.** Կազմակերպության գործարար ակտիվության և ֆինանսական կայունության գնահատման մեթոդները: **Թեմա 4.** Կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի

իրացվելիության գնահատումը: **Թեմա 5.** Իրացվելիության գնահատման ցուցանիշները: **Թեմա 6.** Վճարունակության գնահատման մեթոդները: **Թեմա 7.** Վճարունակության գնահատման Վան Խորնի մեթոդը: **Թեմա 8.** Կազմակերպության ֆինանսական վիճակի և կայունացման գնահատմանն առնչվող մոտեցումները:**Թեմա 9.** Կազմակերպության ֆինանսական դրության գնահատման մեթոդները: **Թեմա 10.** Կազմակերպության ֆինանսական կայունությունը մնութագրող գործիքների վերլուծությունը:**Թեմա 11.** Ֆինանսական անկախության ապահովման խնդիրները: **Թեմա 12.** Կազմակերպությունների անվճարունակության վերլուծության առանձնահատկությունները: **Թեմա 13.** Սիներգետիկ էֆեկտի դերը կազմակերպության ֆինանսական կայունության գործում: **Թեմա 14.** Անվճարունակ կազմակերպությունների ֆինանսական առողջացման ուղիները:

4. Կրթական այլ մոդուլներ

4.1 Գիտահետազոտական աշխատանք (24 կրեդիտ)

1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներ, ստուգարք

Նպատակը.

Գիտահետազոտական աշխատանքի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական որակի բարձրացման և որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը ղեկավարելու սկզբունքներին, ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութեր առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողություն:

Գիտահետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում ուսանողը պետք է.

Գիտենա դասախոսությանը /սեմինարին, գործնական աշխատանքին/ նախապատրաստվելու սկզբունքները, ձևերը և եղանակները, հենց լսարանում տվյալ թեմայից գիտելիք հաղորդելու սկզբունքների և մեթոդների նկարագրությունը, ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները ձևավորելու և մշակելու մեթոդները, ուսանողների հետ գիտական-մեթոդական, մասնագիտական արումներով համագործակցվելու և շփվելու սկզբունքները, ուսանողների որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը ղեկավարելու սկզբունքները:

Կարողանա անհրաժեշտ նյութեր / էլեկտրոնային և տպագիր/ հավաքել և նախապատրաստվել դասախոսությանը, սեմինարին կամ գործնական աշխատանքին, մասնագիտական գիտելիքներ հաղորդելով հանդերձ՝ խթանել ուսանողների մասնագիտական կարողությունների և

հմտությունների զարգացումը, լսարանում աշխատեցնել ուսանողներին՝ կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ, խթանել ուսանողների որոնողական-հետազոտական գործունեություն ծավալելու կարողությունը, համագործակցել ուսանողների հետ մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացում:

Տիրապետի տվյալ դասընթացի ուսումնասիրության կազմակերպման սկզբունքներին, մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութեր առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողությանը, ուսանողների հետազոտական գործունեությունը խթանելու և ղեկավարելու սկզբունքներին, ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական որակի բարձրացման սկզբունքներին, համացանցից, ուսուցման տեխնիկական միջոցներից օգտվելու և ուսանողներին այդ ուղղությամբ համապատասխան ցուցումներ տալու ձևերին և եղանակներին:

4.2 Գիտահետազոտական պրակտիկա (6 կրեդիտ)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է ուսանողների մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը, համակարգումը և ամրագրումը, նրանց մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ և համապատասխան եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ կատարելու կարողությունների ձևավորումը:

Պրակտիկայի արդյունքում ուսանողը տիրապետում է .

- գիտական հետազոտություններն ինքնուրույն պլանավորելու և իրականացնելու կարողություններին,
- գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական դրույթներին, և դրանք մագիստրոսական թեզի աշխատանքներում կիրառելու կարողություններին,
- մասնագիտական գրականության ուսումնասիրության և աղբյուրագիտական աշխատանքներ իրականացնելու և այդ ոլորտում տեղեկատվության ու հաղորդակցության միջոցներն ու տեխնոլոգիաները կիրառելու կարողություններին,
- հետազոտությունների մեթոդներն ընտրելու, դրանք հետազոտության նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու և կիրառելու կարողություններին,

- գիտական տեղեկույթը, ֆինանսատնտեսական ցուցանիշները հավաքելու, վերլուծելու, համակարգելու և մշակելու ժամանակակից մեթոդների օգտագործման կարողություններին,
- հետազոտությունների ընթացքում ծագած խնդիրները լուծելու կարողություններին,
- հետազոտությունների արդյունքները մշակելու կարողություններին,
- հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողություններին,
- իրականացրած հետազոտությունը ներկայացնելու կարողություններին:

4.3 Գիտամանկավարժական պրակտիկա (6 կրեդիտ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի նախագծման, պլանավորման, իրականացման, գնահատման և գիտամեթոդական հետազոտությունների իրականացման հմտություններ:

Պրակտիկայի ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատության փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը, ուսուցման մեթոդների և հնարների կիրառման պայմանները և ձևերը, դասընթացի ծրագրի բովանդակությունը, ուսումնական պարապմունքների տիպերը, կառուցվածքը, առանձնահատկությունները, դասընթացի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան, դասախոսի ուսումնական աշխատանքի պլանավորման սկզբունքները, ուսանողական ինքնավարության զարգացման ուղիները և և այդ ուղղությամբ դասախոսի գործունեությունը, ուսանողների հետ շփման ոճերը,

Կարողանա արդյունավետ շփվել ուսանողների հետ և հետևել նրանց ուսումնառությանը, իրականացնել ախտորոշման և մոնիթորինգային աշխատանքներ, վերլուծել ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը, ուսումնադաստիարակչական գործընթացի մշտադիտարկման իրականացման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու մեթոդներին, եղանակներին, կատարել դասալսումներ, կազմակերպել դրանց քննարկումներ, ինքնուրույն պլանավորել, նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտալսարանային պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ,

վերլուծել և գնահատել կատարված աշխատանքները, աշխատել՝ համագործակցելով գործընկերների հետ, իրականացնել ուսումնական գործընթացի մշտադիտարկում, կանխատեսել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները:

Տիրապետի սեփական մանկավարժական և գիտամանկավարժական գործունեությունը պլանավորելու, վերլուծելու, դասախոսի ուսումնական գործունեությունը դիտելու և վերլուծելու, ուսումնական պարապմունքի ընթացքն արձանագրելու, դրանք ըստ առանձին բաղադրամասերի վերլուծելու, ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման, մեթոդական և գիտամեթոդական ուսումնասիրություններ իրականացնելու, սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու, արժևորելու և գնահատելու հմտություններին:

Եզրափակիչ ատեստավորում

<u>4.4 Մագիստրոսական թեզի պաշտպանություն (12 կրեդիտ)</u>

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Մագիստրոսական թեզի պատրաստման նպատակն է մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, համակարգումը, ուսանողների մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:

Մագիստրոսական թեզի ուղղությամբ աշխատանքներ ծավալելու գործընթացի արդյունքում մագիստրանտը պետք է.

Գիտենա տվյալ թեմայի շուրջ մասնագիտական գրականություն հայթայթելու ուղիները, հավաքած նյութերը խմբավորելու և դասդասելու սկզբունքները, թեզի թեմային առնչվող նյութերի մշակման սկզբունքները, աշխատանքի պլան կազմելու և իր մտքերը, գաղափարները շարադրելու սկզբունքները, շարադրանքի մեջ տարբեր հեղինակներից մեջբերումներ անելու սկզբունքները:

Կարողանա օգտվել համացանցից և տպագիր նյութերից, հավաքել իր թեմային համապատասխան նյութեր, դասդասել և խմբավորել դրանք, մշակել իրեն անհրաժեշտ նյութերը, նշումներ կատարել աղբյուրների մասին, իր մտքերը շարադրել հստակ և գրագետ հայերենով, գիտական ոճին բնորոշ սկզբունքներով, դպրոցներում կատարել համապատասխան դիտարկումներ և ուսումնասիրություններ, հավաքել տվյալներ և վերլուծել դրանք:

Տիրապետի անհրաժեշտ նյութեր հավաքելու, խմբավորելու, դասդասելու, դրանք մշակելու, որպես աղբյուր նշելու գործին, ուսումնասիրած նյութերը մեկնաբանելու, դրանք վերլուծելու, դրանց շուրջ

դատողություններ անելու, դրանք վկայակոչելու կարողությանը, իր գաղափարները, մտքերը ինքնուրույն շարադրելու կարողությանը:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրումը՝ ըստ դասընթացների վերջնարդյունքների

Ուսումնական մոդուլի անվանումը	**Կրեդիտը**	**Ա1**	**Ա2**	**Ա3**	**Ա4**	**Ա5**	**Ա6**	**Բ1**	**Բ2**	**Բ3**	**Բ4**	**Գ1**	**Գ2**	**Գ3**	**Գ4**	**Գ5**
Օտար լեզու մասնագիտական հաղորդակցման ոլորտում (անգլերեն)	2	+						+				+				+
Գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն	2						+			+	+					+
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	2			+				+					+			+
Բիզնեսի իրավական կարգավորման հիմնախնդիրները	3				+	+										+
Էկոնոմետրիկա	2	+						+				+				+
Տնտեսագիտության փիլիսոփայություն	3		+		+									+		+
Նախագծի կառավարում	3			+	+			+	+			+		+		+
Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ	3				+	+										+
Հաշվապահական հաշվառման արդի հիմնախնդիրները ֆինանսական կազմակերպություններում	4	+		+												+
Տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրները	3	+				+										+
Տնտեսական սոցիոլոգիա	2	+								+				+	+	+
Գործարար հաղորդակցում	3				+				+			+		+	+	+
Ֆինանսական վերլուծություն	4				+			+								+
Կորպորատիվ ֆինանսական կառավարում	4			+				+						+	+	+
Ֆինանսավարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում	4			+		+										
Բանկային մենեջմենթ	3			+	+									+	+	+
ՀՀ հարկային քաղաքականության հիմնախնդիրներ	3					+		+								+
Ծրագրային բյուջետավորում	3					+			+							+

		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5
Բանկային աուդիտ	2			+	+											+
Դրամավարկային քաղաքականության հիմունքներ	2			+		+										+
Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր	3			+				+					+			+
Կանաչ տնտեսության հիմունքների ներածություն	3	+			+											+
Կանաչ ձեռնարկությունների տեսակների ներածություն՝ միկրոձեռնարկություն, փոքր բիզնես, սոցիալական ձեռնարկություն	3				+									+	+	+
Կանաչ բիզնեսի պլանավորման և ներկայացման զարգացում	3				+			+							+	+
Ծառայությունների բիզնեսի զարգացման արդի հիմնախնդիրները	3	+			+						+					+
Ֆինանսական առողջացման մեխանիզմները կազմակերպություններում	3				+						+					+
Գիտահետազոտական աշխատանք	24									+	+	+				+
Գիտահետազոտական պրակտիկա	6	+	+				+		+	+					+	+
Գիտամանկավարժական պրակտիկա	6						+			+	+				+	+
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	+								+	+				+	+